

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒԹ ՕՐԵՐԸ: — Հա-
տը 40 փարա:

Բաժանորդագրին ԿԱՆՈՒՅԻՆ — Պոլսոյ համար տարե-
կան 45 դրշ: վեցամսեայ 23 դրշ: եռամսեայ 12 դրշ: —
Գաւառաց համար տարեկան 50 դրշ: վեցամսեայ 26
դրշ: եռամսեայ 14 դրշ:

Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դուրսնալով կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապագի կը զրկուի: Այնուհետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը դադարի թերթ ընդու-
նելէ:

Ծանուցման տողը 2 դրշ:

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵՆԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԵՒ
ԴԻՄԷԼ:

Առ ՏՅՕՐԷՆ-ՀՐԱՄԱՐԱԿԻՅ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՍՏԱԳԱՆԵԱՆ
ՊՕՐԻՍ, ԷՍԿԻ-ԶԱԲԻԵ, ՊԵՐԱԿԵՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

درعليه ده اسكي ضبطيه زقاغنده برريان مطبعه سنده

بالا قاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻՒ 4

ՇԱՐԱԹ

6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890

ԴՍԱՆ ԵՒ ՀԻՆԳ ԱՄԵԱԿ

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Երկուշաբթի օր, 1 հոկտեմբեր, դըպ-
րոցական պարզ հանդէս մը տեղի ունե-
ցաւ Մեղպուրեան վարժարանի քսան և
հնգամեկի առթիւ, ի ներկայութեան ար-
դի աշակերտուհեաց, նախկին շրջանա-
ւարտ աշակերտուհեաց ոմանց և ու-
սուցչական մարմնոյն: Ներկայ էին նաեւ
Գեր. Սրբազանք Տ. Մատթէոս Իզմիրլեան
և Տ. Գրիգորիս Ալէքսանդրեան:

Հանդէսն սկսաւ յանուն Մեղպուրեան
Մկրտիչ Էֆէնտիի ի Յակոբ Էֆ. Ոսկանէ
յօրինեալ և ի Տիգրան Էֆ. Չուխաճեա-
նէ եղանակեալ երգով մը, զոր ընկերակ-
ցութեամբ դաշնակի երգեցին նախկին
շրջանաւարտուհիք: Ապա, ի դիմաց ար-
դի աշակերտուհեաց՝ ընդմիջմամբ երգոց
ուղերձներ արտասանեցին Օր. Շնորհիկ
Սեղրոսեան և Օրիորդ Մազդազնէ Եա-
ղուպեան, ուղղեալ առ իւրեանց հայրա-
գործը և բաղմբարկալ դաստիարակն:

Արդիւնաչափ յորեքեան՝ բանախօսու-
թիւն մ'արտասանելով այս առթիւ, հա-
կիրճ պատմութիւնն ըրաւ իւր ուսուցչա-
կան դործունէութեան, զոր աւելորդ կը
համարուի յառաջ բերել աստ, մտադիր
լինելով մեծարոյ դաստիարակին կենսա-
գրութիւնը հրատարակել «Մաղիկ» յա-
ռաջիկայ մէկ թիւով: Մեղպուրեան Էֆ.
աւարտեց իւր խօսքն՝ աղօթելով վասն
երկարութեան կենաց մը կրթաւէր
կայսր Վեհ. Սուլթան Համիտ խանի, որոյ
հոգածութեան շնորհիւ ուսումն ու գի-
տութիւն անարգել մուտ կը գտնեն ժո-
ղովրդեան ամէն խաւերուն մէջ:

Յակոբ Էֆ. Ոսկանէ յետոյ, որ խօսե-
ցաւ յանուն ուսուցչական մարմնոյն, խօսք
առաւ Գեր. Տ. Մատթէոս Եպիսկ. Իզ-
միրլեան՝ իրել Մեղպուրեան Էֆէնտիի
սանը, և ուսման և ուսուցչութեան մա-
սին իւր տեսութիւնները պերճ ընդունով
մը պարզելէ յետոյ, Մեղպուրեան Էֆէն-
տիի և իւրանուն հաստատութեան հա-
մար տակաւին շատ երկար և արդիւնա-
ւոր տարիներ բարեմաղթեց, և վերջա-
ցուց յորհնելով Մեղպուրեան հաստատու-
թիւնը, ուսուցչական մարմինը և հին և
նոր բոլոր աշակերտուհիները: Հանդէսն
աղօթքով փակեց Գեր. Տ. Գրիգորիս Ե-
պիսկոպոս Ալէքսանդրեան:

Յաւարտ հանդիսին, մեծ ու պզտիկ

համայն հանդիսականք պատուասիրեցան
անուշեղինօք:

Վարժարանին քսան և հնգամեկին առ-
թիւ բանասէրք ու նախկին աշակերտք ու
աշակերտուհիք ոմանք առ Մեղպուրեան
Էֆէնտի և առ գործակից Տիկինն շնոր-
հաւորական գրեր ուղղած են, յորոց զո-
մանս ի ստորեւ կը հրատարակեմք: Կը
հրատարակեմք նաեւ Օրիորդ Շնորհիկ
Սեղրոսեանի արտասանած ուղերձն: Կ'ար-
ժէ յիշել նաև որ վարժարանին նախկին
աշակերտուհիներէն մին թանաքամանի
ոսկեայ գեղեցիկ կաղմածք մը նուէր բե-
րած էր այս առթիւ, արդի աշակերտու-
հիներէն մին ալ՝ ասեղնագործեալ շրջանա-
կով իւղաներկ գեղեցիկ պատկեր մը:

4 Հոկտ. 1890 յՕրթաբէջ

Ազնիւ բարեկամ և նախկին պաշտօնակից,
Ջերմագինս կը շնորհաւորեմ Ձեզ կրթական
Հաստատութեանը քսանևհինգամեայ Յորեք-
եանին առթիւ: Այդ երկար ասպարէզն էր
կարի տաժանելի, և ոչ մի յանհատական հա-
տատութեանց կարաց ժամանել առ մեզ ցայդ
վայր յարատուութեան: Եղական նախանձելի
դիրք մը գրաւած էք ազգային կրթական
տարեգրութեանց մէջ, յորս փառաւոր էջ մը
սլիտի ունենայ Ձեր անունն՝ անբաժան Հա-
տատութեանդ անունէն զոր վարեցիք այն-
քան արդիւնաւոր կերպիւ:

Մաղթելով Մեղպուրեան վարժարանի մը-
տընջեալուր տեւականութիւն և օրըստօրէն-
կան պայծառութիւն,

Մնամ յարգանաց ողջունի, Ձեր բարեկամն

Ս. ԳՈՐԳԻՆ
Ազնուաշուք Մկրտիչ Էֆ. Մեղպուրեան
և ըն. և ըն. և ըն.

4 հոկտ. 1890 Խճատիէ

Տէր,

Այսօր ձեր համանուն վարժարանի 25 ամ-
եակն է: Հանրութեան օգտին նուիրեալ աշ-
խատութիւնը՝ աստուածային աշխատանք կո-
չուած է: Այս հաշուով, դուք, Մեղպուրեան
Տիկինն ալ գործակից ունենալով, աստուա-
ծային աշխատանքն ունեցած էք: Գէթ իմ
համոզումն է, զոր այսօր, ազատ ո' և է շահակ-
ցական կապերէ, աւելի անկեղծութեամբ
կարող եմ յայտնել:

Իսկ մասնաւոր խնդրութիւն մը զոր ունիմ,
այն է որ ես ալ այն աստուածային աշխա-
տութեան մէջ իմ բաժինն ունեցած եմ իրել
գործաւոր, գործող ըստ չափու:

Շնորհաւորելով 25 ամեակը, կը մաղթեմ
Ձեր բոլոր բարեկամներու հետ, որ յիսնամե-
եակն ալ բոլորէք յօգուտ հանրութեան:

Խորին յարգանքօք

Մ. ԿԻՐՈՅԵԱՆ

Մեծ ապատիւ,

Մկրտիչ Էֆէնտի Մեղպուրեան

Ազնիւ Դաստիարակս:

«ԿԱՄԻԼ ԵՒ ՄԻՇՏ ԶՆՈՅՆ ԿԱՄԻԼ» աստի՛
ահա կախումն ունի մարդոյ բարոյականը:
Կամիլ զբարին, զհետ պնդել նմա, իրացնել
զայն՝ տառապելով ու մաքառելով, յայտա-
բար է արդար և արի բնաւորութեան: Եւ
ո'չնայ ազնուագոյն ու յարատեւ լինի բարին
զոր մարդ կը կամի ու կ'իրացնէ՝ այնքան ա-
ւելի մեծ պէտք է նկատուի այն մարդ, և
այնքան աւելի արժանի պէտք է լինի երախ-
տագիտութեանն ու քաջաբերութեանն այն
միջավայրին յորում կը գործէ: Ի՞նչ բարի
կայ աւելի ազնուագոյն ու յարատեւ քան Դաս-
տիարակութիւն: Մարդ կուրթեան վախճա-
նին, քաջաբարութեան զեկն ունին ի ձե-
ռին նոքա որք կը դաստիարակեն. սերունդ-
ներ կ'անցնին, աշխարհի կազմաւորութիւնք
կը փոփոխին, և սակայն դաստիարակի գործն
մարդկութեան մէջ կը խմորի և աճելով կ'աճի:

Քառորդ դար մ'է ահա որ Հայ մանկուոյն
ձեռքէն բռնած՝ ցոյց կուտայ նոցա ուղին ընդ
որ պարտին ընթանալ, պարտուց ուղին՝ իւր
բազմաճիւղ արահետներով: Ու Ձեր սաներէն
բազում են նոքա որք՝ մտած այդ ուղւոյն մէջ
և սփռուած իւր արահետից վրայ՝ պատիւն
են Ձեր անունն ու Ձեր հաստատութեան:

Ես, յետինն անոնցմէ, կուգամ այսօր՝ Ձեր
քսանևհինգ ամեայ Յօրեքեանին առթիւ՝ իմ
խորին երախտագիտութեան ու մեծարանաց
հարկը վճարել Ձեզ, համբուրելով Ձեր ձեռ-
ներ, և ինդրել յերկնից որ տայ մեզ հանդի-
սապէս տօնել Ձեր յիսնամեակի Յօրեքեան՝ երբ
դուք արդէն ալեղարդ՝ բերկրալից դիտէք
Ձեր շուրջն Ձեր արդիւնաւոր կենաց նորա-
բողոք շարունակութիւնն յանձին Ձեր զաւա-
կաց և յանձին նոցա որոց եղէք բարոյական
հայր:

Մնամ խորին երախտագիտութեամբ
Գ. Ա. ՄԱՍԿԱՆԵԱՆ

4 Հոկտ. 1890

Սկիւտար

Հայր Բաղմբարկալ,

Ամէնէն հաստատուն կարծուած շէնքերը կը
կործանին, յիշատակարանք կը խորտակին,
կոթողք իսկ հետախաղաղ կը ծածկին: Ժա-
մանակն ոչ իմիք կը խնայէ, ոչ ինչ կը վրիպի
անոր հարուածներէն, միայն բարին կը մնայ
անկորնչելի, այն կը յաղթանակէ, նորա յի-
շատակի արձանն սրտերու մէջ կանգուն կը
մնայ յաւէտ ցմախճան ժամանակաց:

Եւ ո՞վ է բարեգործն, ամենամեծ գործիչն
քան ճշմարիտ հայ դաստիարակն՝ որ կը լու-
սաւորէ մտքերն, իմացական աշխարհի արե-
գակն՝ որ խոպան դաշտերն արգասաբեր կը
կացուցանէ, անապատը կը փոխէ ծաղկա-

զարդ բուրաստանի, կը փրկէ թշուառութենէ տղէտն, կ'ազատագրէ իւր սանունքն և սանունհիք:

Դու, ո՛հ հայր Մեզպուրեան, այն երջանկութիւնն ունիս, զի ծառայած ես մտաւոր զարգացման. երջանիկ ես, որովհետեւ շատերու երջանկութեան պատճառը կը հանդիսանաս: Մանուկ հասակէ քո տեսլականն եղաւ աշխատիլ հանրային բարւոյն, դաստիարակելով հայ ազգի զաւակունքն. քո աշխիւ բաղձանքն էր կանգնիլ քաջարի ակոյեան ընդդէմ տգիտութեան, և հալածել խաւարն: Դու, լուսոյ քաջամարտիկ, չահեցար յաղթանակի դափնին և պսակ փառաց, որովհետեւ կրթական ասպարիզին նուիրելով քո երիտասարդութիւն, փափաքեցար զի քո կեանք ողջոյն նուիրուած լինի դպրոցի, և հաստատեցիր դպրոցն 1865 թուականին, դպրոց, վառարան մեր իմացականութեան, բո՛յն անմեղութեան և ուսմանց ճեմարան:

Ո՛հ, այսօր քանի՛ քաղցր է մեզ, քո սանունհեաց, 25 ամեայ կրթական հաստատութեանդ տարեդարձն տօնախմբել աստ և չընորհաւորել Ձեզ երջանիկ տարիներ, և մաղթել չաք յարտօսր զի այս տուն միայ յաւէտ անսասան, և կրթութիւնն՝ զոր աստ կ'ստանամք և որ է Ձեր այնքան վաստակոց վարձքն, լինի միշտ մեր կենաց վախճանն Ձեր քաղցրիկ յիշատակն, որպէս և մեր սէրն առ Մեզպուրեան վարժարան՝ անհուն և խանդավար:

Հուսկ ուրեմն, այս լինի թող ընդ միշտ մեր ձայնին արձագանդն.

Կեաց դու յաւէտ անսասան,
Ո՛ր Մեզպուրեան վարժարան:

ՇԵՆՈՐԶԻԿ ՍԵՂՈՍԵԱՆ

ԱՌ ԾԱՂԻԿ ԱՇՆԱՆԱՓԹԻԹ

Վերջին վարդերն ամառայնի
—Այնքան սիրուն ու գեղանի—
Թաւառմելով եղեմնախառ՝
Կը տեսնինք ընդ դաւաճալայ:

Այս քաւառմաճ վարդերու մէջ,
Ի շունչ հողմոց այս ցուրտ ու գէշ,
Այս արատաւոյ երկնից ներքեւ,
Ողորդն, ՄԱՂԻԿ, կենսապարգեւ:

Ողորդն քեզի, որ յես ամբան,
Նուրբ կոկոնէդ գաս յերեւան.
Քեզ կ'ողորմենք շատ քոյր—սրբեր,
Ոյք քան ըզքեզ վաղ եմ փրկեր:

Մի՛, մի՛ երբէք յուսահասիր,
Թ'երկար ձրմեռ փոքորկալիր,
Պիտի ծածկէ զքեզ սպիտակ
Պաղ, բմբուկան սաւանի սակ:

Փքթէ՛, ՄԱՂԻԿ դու, յուսավառ,
Օր մը՝ այո՛, օ՛ր մ'անպատահառ,
Փայտն գարնան զըւարթ արեւ
Քեզ պիտի այս սիրոյ բարեւ:

Փայլէ իրեւ հեզ մանիւշակ,
Բուրէ զայիւս վարդ անուշակ,
Նւ առաւել քան զնոսա՛,
Քո յիշատակն անջինջ մընա:

ԱՌԵՏԻՍ Կ. ԿԻԿԻՊԵՏԻԱՆ

Սամսոն

Բարսեղ Էփեփճեան. — Տարեբ. մայրենի լեզուի. Ա. և Բ. տարի. Ա՛. 2 զրշ, Բ՛. 3 զրշ. Կը գտնուի ամէն գրադատման քով:

ԿՐՕՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Վանօրէից կազմակերպութիւն մեր ազգին յառաջդիմութեան նպատաւոր պայմաններէն մին է. յայտ է թէ, ի հնում ժամանակի՝ վանքեր լուսաւորութեան կեդրոններ եղած են, ուսման նուիրեալ անձինք անդ կը գտնէին իրենց լուս պարապմունք և սիրեցեալ վաստակներ: Վանքեր էին ուսումնավայրք, և որպէս ուստատեղի, նոյնպէս իրեւ դըպրութեանց մենաստանք նշանաւոր կը հանդիսանային, իբրեւ դպրոցք, որոցմէ դուրս կուգան այժմ հայ մատենագրութեան բազմադարեան գանձեր, որք պէտք է գտնուին ամէն ազգայնոյ մատենագրութեան մէջ յընդերկա՛ր ուսումնասիրութիւն:

Հարկ անհրաժեշտ է կրօնական կրթութիւնը մեր ազգի համար, և վանորայք կրնան տարածել զայն: Ո՛րքան սիրելի է, երբ Աստուծոյ տաճարք կը լինին միւսնոյն ժամանակ ուսմանց տաճարներ. առաջին վիճակին մէջ օրհնեղութիւններ կը մատուցանեն Աստուծոյ, իսկ երկրորդին մէջ հանուրց բարիք ընելու գիտակցութիւնն կը նուիրեն յերկինս: Միանձանց կեանքն այսպէս կրկին տեսակէտ ունենալով՝ օգտակար կեանք կը լինի, բոլորին օրհնութեանց արժանի, որովհետեւ ուսմանց աշխատիլն ո՛չ ապագէն նուիրական է որպէս աղօթքն՝ զոր կը մատուցանէ ուսումնասէր և սրբասէր վանականն:

Այս վիճակին մէջ վանքն չիքիր ծուլութեան րոյն, զեղծմանց կեդրոն, հակառակութեան վայր, գերեզման երկու աշխարհներու մէջ կանգնած, այլ մանաւանդ ուսմանց ճեմարան և յաւիտեանականութեան նախագաւիթ, հաստատութեան և եղբայրութեան բնական ուր կ'ապաստանին նոքա՝ որք հրաժարած են աշխարհէ, զօրսանքէ, չահերէ, ամէն երազներէ, ամէն սին կիրքերէ և բաղձանքներէ: Այսպիսի անձնութեան թիւն մի արժանի է խորին հիացման: Հայեցողական կեանքն ունի քաղցրութիւններ, իմաստասիրական բարձրութիւններ, երբ սոսկ ճգնողական կեանքի մէջ չընդունաւորուիր այն, երբ վանականն իւր նայուածքը կը պտտցնէ ազգին վերայ, կը սիրէ ուսումն, թոյլ չտար զի իւր մենաստան լինի խաւարչտին օթեւան աւելորդապաշտութեանց, կեղծ բարեպաշտութեանց: Հակառակ պարագայի մէջ վանքն կը լինի ճահիճ մի, որպէս կ'ըսէ Վ. Նիկոս: Յայտնի է թէ այս տեսակ ճահիճներ չուտով կը նեխին. իրենց անշարժութիւնը վնասակար է, և եռացումը ժողովուրդները տենդով կը համակէ, կը հիւժէ և կը տփգունէ. վերջապէս այս ճահիճներ կը լինին եղիպտական պատուհաս:

Աւելորդ է ըսել թէ մեր վանօրայք եթաւայ չեն այս տխուր դատապարտութեան, որովհետեւ մեր վանականք չեն չինացի քուրմեր, մարապուներ և այլն և այլն, որք մուրացիկներու նման կը թափառին այսր և անդր: Ձի մեր վանականք գիտեն թէ թուուք են այնպիսի հարց՝ որք իրենց աղօթից և հսկմանց հաւատար սիրեցիկ լեզու և մատենագրութիւն: Ո՛րչափ գնահատելի աշխատութիւն մի պիտի լինի, եթէ ոք պատրաստէ մեր բոլոր վանօրէից պատմագրութիւնն, ճշգրիտ նկարագիրն նոցա անցեղոյն ու ներկային, հմտալից ծանօթութեամբք. այսպիսի գործ մի ամէն բանասիրի ընթերցման առատ նիւթ կը մատակարարէր, և կը լինէր աղբիւր պատմագրութեան: Կը խոստովանիմք թէ

դիւրին գործ չէ, որովհետեւ հարկ է ուսումնասիրել բազմաթիւ գրութեանքներ, ի հարկին դիմելով հմուտ անձանց, առաջնորդաց, վանահարց, ևն. բայց բացառիկ գործեր կը պահանջեն բացառիկ կարողութիւններ՝ որք չեն պակսիր հայ գրագիտաց սակաւթիւ խմբին մէջ (1):

Մեր վանօրէից կազմակերպութեան խնդիրն աչաց առջև ունենալով, ուրախութեամբ կը դիտեմք Արմաշու վանուց ի դպրեվանս փոխուիլն՝ որ հաստատ հիման վերայ դրուելով պիտի կրնայ անշուշտ իրական պէտքի ծառայել իբրեւ ուսումնավայր և վարդապետարան. յայտմ՝ յաջողութեան առաջին պայմանն էր ապահովել եկամուտն, կանոնաւորել մատակարարութիւնն: Եկամուտն ապահովեալ է ուստատարաց բարեպաշտական նուիրատուութեամբք, իսկ մատակարարութիւնն անվրիպելի է խնամակալութեան ուշադրութեան: Ուրախաբար պարագայ մ'է զի այս տարի իբրեւ նորութիւն՝ Ս. Խաչի տօնի առթիւ հրատարակուեցաւ ի լրագիրս անցեալ և այս տարւոյ հասութից հետեւեալ բաղդատական ցուցակը.

	1889 դր. .	1890 դր. .
Դարպաս	7,225.50	— 8,531.75
Բանկալ	21,306	— 17,005.25
Գանձանակ	7,838.25	— 7,190.75
Մատաղ	5,144.25	— 2,548.75
Պատկեր	3,473	— 2,474.25
Մանկանուէր	1,603	— 810.
Նուէր	582.50	— 688
Կնքահայրութիւն	260	— 118
Խաչհանգիստ	801	— 648
	48,234.25	39,979.75
Տարբերութիւն	8,254.50	

Դպրեվանուց արդիւնաւոր ընթացքին երկրորդ պայմանն էր ուսուցչական մարմնոյ բարւոք կազմութիւնն՝ որով միայն կարելի պիտի լինէր բարձրացնել դպրեվանուց վիճակն և առաջադրեալ նպատակն իրագործել: Ուրախեմք որ դպրեվանուց ուսուցչական մարմինը կարեւոր տարրով մը կը զօրանայ յանձին Արթ. Եղիշէ վարդապետի Դուրեան որ այս երկուշարթի (1 հոկտ.) մեկնեցաւ յիւր պաշտօնատեղին: Եղիշէ վարդապետի ընտրութիւն պատիւ կը բերէ վանքին խնամակալութեան ու գոհունակութիւն կը պատճառէ ամէն անոնց, որք կը ճանչնան ի մօտոյ յիշեալ եկեղեցականին ուսումնական բարձր արժանիքն: Գեր. Իգմիրեան Տ. Մատթէոս Սրբազանի ձեռնադրութեամբ՝ կանուխէն կրօնաւորութեան նուիրուելն քիչ յետոյ, ի Պարտիզակ գնաց տեղւոյն դպրոցին Տնօրէն-ուսուցչի և Եկեղեցւոյ բարոյգի կրկին պաշտօններով, զորս վարեց ամբողջ տասն տարիներ՝ գերազանցապէս օգտակար հանգիստանալով: Այս շրջանի մէջ վարժարանին տուաւ բարւոք կազմակերպութիւն մը և հասոյց բաղում շրջանաւարտ սանուհիներ ու սաներ, յորոց ոմանք կը ծառայեն այսօր իրենց բարոյական որրանի մէջ իբրեւ կարող ուսուցիչներ. անոնցմէ մին է Դարձեալ Նիկոմիդիոյ Աղգային վարժարանաց նորընտիր Տեսուչ Երուանդ Լճիշտի Անդրէասեան ուսեալ երիտասարդն: Բաց ի սանցմէ, Աղգին ընծայեց նաեւ արժանաւոր եկեղեցական մը, զԱրթ. Աղաւնունի վարդապետը:

(1) Նւ բացառիկ զոհողութիւն զոր ընելու կարող չեն մեր գրագէտք:

Տասնամեայ կանոնաւոր ընթացք դպրոցի մը ոսկեդարն է. նոյն իսկ Պոլսոյ մէջ գեթուա-րաւ կը պատահիմք ազգային վարժարանի՝ ուր ձեռնհաս Տնօրէն մի տասն տարի պաշտօնա-վարէ՝ առանց բաղխելու բազմադիմի գեթուա-րութեանց :

Կը հաւատամք թէ Արժ. Եղիշէ վարդապե-տի գործունէութիւնը արդիւնաւոր պիտի հանդիսանայ նաեւ Արմաշու դպրեվանոց հա-մար, յուրախութիւն և ի վառս ազգին :

Ս. ԳԱԲԱՍՏՅԱՆ

ՊԱՏՃԷՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ԿՏԱԿԻ

ՅԱՆՈՒՆ ԶՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐՈՅ

Գահիրէ 1865 ամի, Յունուարի մէկ

Ես Կ. Վ. Շահնազարեանց, ծնեալ ի Հա-մատան յամի 1814, հիւանդութեամբ հոս գա-լով բժշկութեան համար, և տեսնելով որ վի-ճակս օր աւուր կը ծանրանայ, ուստի քրիս-տոնէական պարտքս ամենայն ջերմեանդու-թեամբ կատարելէ զինի, այս կտակս ըրի ա-ռողջ մտօք, իմ սեպհական գրչաւ և սոորա-գրութեամբ ի գիտութիւն ապագայից, և ի հրահանգ իմ կտակակատար Վսեմափայլ Նու-պար փաշային, իմ բարեկամին և Բարեբարին :

1. Ունիմ ի Կ. Պոլիս հանգուցեալ Խորա-սանձեան Պետրոս Ամիրայի տունն երկու սնտուկ գիրք, զգեստ և կարասիք, նոյնպէս Ղալաթիոյ Լուսաւորիչ եկեղեցւոյ քարուկիր սենեկի պատուհանն մէկ կապոց պիտանի և անպիտան գրուածք, սմափար, վերմակ, և ըն, զորս գրեր եմ Խաղաղի Գէորգ քահանայ եղբորս իւր տունն տանիլ. Այս ամէնս նոյն անձին կը ձգեմ իրիւր յիշատակ մեր 15 տար-ւոյ անկեղծ բարեկամութեան :

2. Ղալաթիա բնակեալ Մեծատուրեան Պետրոս աղայի մօտ շահով ունիմ 100 Օսման-եան լիրա, Խապիւզի Տէր Գէորգի և Մոմձ-եան Մկրտիչ աղայի գիտութեամբ : Այս 100 լիրա առնուի իմ մահուանէն յետոյ և Թիֆ-լիզ զրկուի մեր անկեղծ բարեկամ գնդապետ Զաքարիա Յովհաննէսեան Շահազիզեանցին, որպէս զի անկէ 75 լիրան իմ քեռորդի Մը-կըրտիչ փոնջի Արրահամեանին ընծայէ իմ կողմէն, իսկ 25 լիրան իմ հօրեղբորդուցն, որք երկուքն ալ Վաղարշապատ կը բնակին :

3. 1856 թուէն սկսեալ մեր մամուլէն ե-լած հայերէն և գաղղիերէն Շար Հայ պատ-մագրաց և կանոն Սաղմա զրկեր եմ Պոլիս 7500 հատորի չափ. ասոնցմէ 1000 օրինակի չափ աղքատ դպրոցներու ընծայեր եմ, մը-նացեալն Խապիւզի Մոմձեան Մկրտիչ աղային քովն է : Կը խնդրեմ Նուպար փաշայէն որ զանոնք ամէնն ալ մեր ազգի աղքատ դպրոց-ներուն արդարութեամբ բաշխել տայ թուր-քաստան, Ռուսիա և Պարսկաստան :

4. 2րդ յօդուածի մէջ յիշատակեալ 2. Ե. Շահազիզեանցին 150 հատորի չափ Շար Հայ պատմագրաց զրկեր էի ծախելու համար, որ և ինձ երկու տարի առաջ 200 Փրանք զրկեր էր : Արդ, մնացեալ հատորներուն համար իրեն գրուի որ կարօտաւոր ուսումնականաց և աղ-քատ ուսուցմարանաց ձրի բաշխէ եթէ գըր-եանքն, եթէ անոնց զինն :

5. Թէոդոսիա Այվազեան Գարրիէլ վարդա-պետի մօտն 70 հատոր Շար Հայ Պատմագը-րաց ունիմ և 10 երկրագունտի 30 թուի վարձ. գիրք և գումարն Նուպար փաշայն ստանայ :

6. Եսայի Պատրիարքի մօտ 20 Հերքուճի Դաշանց թղթոյ, 42 Շար Հայ պատմագրաց, և 8 օրինակ երկրագունտի ստակ ունիմ. ասոնք ալ իմ կտակակատարն ստանայ :

7. Հալէպցի Քիւրքճեան Պարոն Յովհաննէսն մեզ 16 լիրա սթէրլին 11 շիլին, 10 1/2 փէննի ստակ պարտական է ի գին մէկ ջրհան մեքե-նայի զոր անոր աղաչելովն Անգղիա Յակոբ-եան աղայի ձեռամբ գնեցի և էքիզլէր Կա-րապետ աղայի ձեռամբ զրկեցի անցեալ տա-րի. հաշուեթուղթքն Մանչեսթեր են. այս գումարս ալ իմ կտակակատարս ստանայ : Նոյն Քիւրքճեան մեզ պարտական է նաեւ 7 էքի-րագնտի 30 թուի ստակ. այս ալ ստանայ :

8. Մանչեսթեր Եղիզարեան Կարապետ ա-ղայի մօտ ունիմ 7 թուրքի բօնսղիտէ. անոր յանձնեք եմ նաեւ մէկ կնքեալ սնտուկ, որու մէջ կան իմ ապետական խաչերն, մէկ ոսկի էնֆիէի տուփ, մէկ ոսկի մինէլի տուփ, մի ոսկի և մի արծաթի ժամացոյցներ, քանի մը հարիւր ոսկի և արծաթ հին դրամներ, և մի փոքրիկ մագաղաթի վերայ գրուած Աւետա-րան Յովհաննէս Բալսաղիար պատրիկ գործա-ծութեան համար, մի փղոսկրեայ այցելու-թեան տոմսակի պահարան քանդակեալ, և այլ մանր մոներ արծաթի և ոսկի և այլ կա-րասիք : 23 Հայոց հին դրամներն Ազնուուհի Ֆուլիկ տիկնոջն Նուպար փաշային կը ձգեմ, իրիւր ամենաչնչին երախտագիտութեան ա-պացոյց. մագաղաթի Աւետարանն որ իմ ըն-տանիքէս ինձ մնացեր է և որ արդարեւ յոյժ հազուագիւտ է, որովհետեւ ոչ էջմիածին, ոչ երուսաղէմ, ոչ Վենետիկ և ոչ այլուր անոր նման չկայ, որոյ համար ինձ շատ անգամ 1500 տալով կամեցան գնել և ես չկամեցայ ազգէն հանել, Վ. Նուպար փաշային կը ձը-գեմ իրիւր յիշատակ անմոռաց սիրոյ, այնու պայմանաւ որ որդւոց որդի իր ընտանիքի մէջ պահէ, իսկ ամէն մնացեալն խնդրեմ վա-ճառել տայ և մէկ գումար կազմէ, որոյ հա-մար յետոյ գրելու եմ. Բոնսղիտներն նոյն-պէս ծախուին և գումարն նոյնպէս միանայ : Նոյն աղայի մօտ թողուցեր եմ դարձեալ 40 գինէ, որ մեր դարանի մանր ծախքն հոգայ-եթէ աւելի ստակ մնացեր է՝ առնուի, եթէ ես պարտական մնացեր եմ արուի, որովհետեւ մինչև հիմայ հաշիւ չէ զրկեր :

9. Մանչեսթերի եկեղեցիի ունիմ մէկ ար-ծաթի գլխով ապանօզ դաւազան, մէկ ար-ծաթի մասնատուփ, մէկ արծաթի խաչ, ար-ծաթապատ Աւետարան, մէկ ձեռք զգեստ պատարագի. բոլոր եկեղեցական գրեանքն իմն են. ունիմ նաեւ մէկ կերպաս փիլոն, մէկ չու-խայ նոր վերարկու, վեղար և այլն, զորս բո-լորն ալ նոյն եկեղեցիին ձգեմ յիշատակ, բաց ի արծաթի խաչէն որ Խապիւզի եկեղեցիէն ա-ւանդ առնուած ըլլալով կը խնդրեմ որ իր տեղն դարձնել տայ իմ կտակակատարն և իմ հոգիս ազատէ :

10. Մանչեսթերի եկեղեցւոյ տան մէջ ու-նիմ մի գրատու, ուր կան 3000 հատորի չափ Հայերէն, Գաղղիերէն, Ռուսերէն, Անգղիերէն և այլ լեզուօք մատենաներ. կան հարիւրա-ւոր արծաթի և պղնձի անդիքաներ, և քա-նի մը ձեռագիրք, որոցմէ Միքայէլ Պատրի-արքի պատմութիւնն Պօլսոյ Միջագիւղի թանգարանէն աւանդ առեր եմ, և իր տեղը դարձուի. իմ ննջարանիս մէջն են 6 արծաթի կերակրոյ դրդալ, չորս նոյնպէս չայի, և 6 արծաթի դանակ հանդերձ մէկ սնտուկ և երկու կոմիոզ լեցուն զգեստով և կարասիքով, վերն ունիմ մի ամբողջ լուսանկարի գործիք,

և հարիւրաւոր չիլ քինի և պրանդի. 3000 հատոր գրեանքն կը կտակեմ Պօլսոյ Հիւան-դանոցին և Իզմիրի Մեսրոպեան դպրոցին. ամէն մնացեալն ծախուի և գումար ըլլայ մեր կտակակատարին մօտ :

11. Մանչեսթեր մէկ ամբողջ տպարան ու-նիմ հանդերձ մամլով և ամէն պարագայիւք, 11 տեսակ պղնձի մայրեր, քանի մը տեսակ պողովատիկ հայր. երկու ամբողջ մայրերն և այլ երեք տառ ցուլիչ Նորմանտոնի մօտն է, զորս տուեր էի գիր թափելու և մուսացմամբ մնացեր են. ունիմ մեր տպարանն նաեւ 25 կապ թուղթ և 700 քիւլոյի չափ հայերէն և անգղիարէն տառք. Ամէնն ալ ծախուին, և գումարը մեր կտակակատարին յանձնուի :

12. Մանչեսթեր մէկ բժիշկի՝ որ Բուէնտիչ Սդրիդ կը նստի՝ 1 լիրա 13 շիլին պարտք ունիմ, նոյնպէս ցուլիչ Նորմանտոնին 14 շի-լին չափ, նոյնպէս Փարիզ Ռիւ Վալէն 48 ցուլիչին 7 Փրանք, և Ռիւ լա Հարպ 38 թիւ ծերունի կազմորարին 16 Փրանք տալու եմ. ասոնք ամբողջապէս վճարուին և հոգիս ա-զատուի :

13. Մանչեսթերի գրոցս մէջ կան իմ չինած գաղղիերէն և հայերէն խառարանն, գաղղիե-րէն Հայաստանի տեղագրութիւնն, գաղ-ղիերէն Միքայէլ Պատրիարքի պատմութեան թարգմանութիւնն, երկու հատոր եկեղեցա-կան պատմութիւն, և մի հատոր ընդարձակ քրիստոնէական վարդապետութիւն և այլ շատ մանր գրուածք. ասոնք յանձնուին Խապիւ-զի թանգարանին, գուցէ օր մը տպուին :

14. Մանչեսթեր տպած պատրաստի կան Տէր Յովհաննէս Խաչկեանի անցքն և իր պատ-կերն պղնձի վերայ փորուած հոն է : Այն գրքի ճակատի խաչն ծուռ գրուեր է և թը-ուական 1864 է, և գրքին մէջ քանի մը տա-ռասխալք կան, որոց ցանկն իմ և անոր թըղ-թակցութեան մէջ է : Մեր գրաշարին այս վը-րիպակները չարել տրուի և ճակատին հետ մէկտեղ տպուին 1865 թիւ դնելով : Նոյնպէս անոր 500 պատկերն տպուի և իմ ծախքով թղթակազմ ընելով, բոլորն մէկ սնտուկ լեց-ուի և իր հաշուին Կալկաթա իրեն զրկուի : Նոյնպէս հոն տպած պատրաստի կայ Միքա-յէլ Պատրիարքի պատմութեան առաջին հա-տորն : Ասիկա ալ թղթակազմ կապուի և մեր բաժանորդ վճարողներուն ձրի բաժնուի և մնացեալն ծախուի ի չաչ մեր :

15. Փարիզ Կոստանդեան Պօղոս աղայի մօտ մի պարկ ունիմ որոյ մէջ կան 25 Լուրարդ ո-րոց արժէքն է 13500 Փրանք, երկու օրի-կասիօն Վիլ տը Պարիսի որոց արժէքն է 850 Փրանք, հինգ հինգերորդական օրիկասիօն Կոմիւնալ, որոց արժէքն է 405 Փրանք, իմ մօտ սնտուկիս մէջ ունիմ երեք օրիկասիօն Քրէտի Իմիոպլիէ, որք ինձ արժեր են 1500 Փրանք, բայց այժմ հազիւ թէ 1200 Փրանք արժեն : Ասոնք ամէնը ծախուին և գումարն իմ կտակակատար Նուպար փաշային ձեռքն ժողովի :

16. Ունիմ աղքատաց համար 3000 Փրան-քի չափ օգնութիւն ժողովեցի, և Պ. Պ. Լանկ-լուայի և Մուրատեանի գիտութեամբ հոն զրկեցի. յետոյ Յակոբեան աղան անցեալ տա-րի ինձ յանձնեց 4 լիրա, Բիրմանէն ալ այս տարի եկաւ 270 Փրանք որ տակաւին Լոնտոն Պ. Սէթ Արգարեանին մօտն է : Այս գումարս ստացուի և մեր 4 լիրայի հետ միացունելով իր տեղն զրկուի :

17. Իմ ձեռքս եղած ստակն իմ թաղմանս բաւական է. խնդրեմ որ իմ թաղումն պարզ

ըլլայ և անշուք: Իմ գերեզմանին վրայ տընկուի մէկ սիւն մարմարիոն կամ գրանիդ մէկ ու կէս մէթր երկայն, և վրան գրուի Հայերէն և Գաղղիերէն, « Կարապետ վարդապետ Շահնազարեանց, ծնեալ 14 մայիսի 1814 ամի ի Համատան և վախճանեալ ի Գահիրէ յամի 1865... ամիս: »

18. 25 տարի է եղեր մէկ փափաք միայն ունեցեր եմ, և այն իմ սիրելի Ազգիս համար: Մեր ժողովրդեան, այլ ազգաց համեմատութեամբ, արտաքոյ կարգի թշուառութիւնն տեսնելով, անոր պատճառն ուրիշ բան չեմ գտեր բայց եթէ անոր անկրթութիւնն ու տգիտութիւնն, և ասոր դարման տանելու համար ջանացեր եմ՝ ընդ զանազան ժամանակս մէկ ուսումնական միաբանութիւն հաստատել և գիշերօթիկ դպրոց մի բանալ և արժանաւոր եկեղեցականներ պատրաստել, որք այլ և այլ գաւառներ տարածուելով և իրենց սովորածներն սփռելով մեր ազգի մանկանց մէջ՝ գիտութիւններ, գրականութիւն և հրահանգ ամենուն մասնակցին: Կ. Պոլիս, Փարիզ և Մանչեսթեր իմ մտադրութեանց կենդանի վկայ են, ուստի ինչ որ իմ կենդանութեանս չկարացի ընել, իմ մահուանէս յետոյ կը յանձնեմ իմ կտակակաւոր Վսեմափայլ Նուպար փաշային որ ընէ: Իմ անունս փոյթ չէ որ յիշուի կամ ոչ, բաւական է միայն որ իմ փափաքս կատարուի: Հետեւաբար իմ վերոյիշեալ ստացուածքն փաճառուելէն և պատրաստ գումարներն ձեռք բերելէն զկնի կարծեմ թէ հազար գինէի զուտ գումար կը կազմուի: Այս գումարն կը խնդրեմ այնչափ ատեն շահով բանեցունէ՝ մինչև որ 4 հազար գինէի գումար ըլլայ, ապա գրամագլուխն հաստատուն եկամուտի դնելով՝ անոր տարեկան եկամուտովն տասն աշակերտի համար իմ անուամբ մէկ գիշերօթիկ դպրոց բանալ տայ Կիրիկիայի կողմերն ուր որ ինքն պատշաճ տեսնէ, վերատեսչի, դասատուաց և այլ տընօրինութիւններն իր գերդաստանի մէջ պահելով, որով և Աստուծոյ օրհնութեանն, Ազգի երախտագիտութեան, և իմ գոհութեանս արժանի ըլլայ՝ ինքն, իւր ընտանիքն, և բոլոր ազգատոհմն յորդուց որդիս, ամեն:

19. Իմ դէմար փոստի ալրոմն Պօղոս Նուպարեանին սիրոյ յիշատակ կը ձգեմ որ քանի տեսնէ՝ զիս յիշէ:

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ
Ճողովքեանք կ'ստնագրեմ
ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Ք. Խաղիւղի

1865 Օգոստոս 31

Ա Ձ Դ

Տաճկերէն և Գաղղիերէն լեզուաց քաջահմուտ ԱՌԱՋՆԱԿԱՍՐԳ ՓԱՍՏԱԲԱՆ ՄԸ՝ որ երկար տարիներ անգամակցած է այլ և այլ դատարանաց, և միանգամայն առևտրական դատարանի նախագահութեան պաշտօններ վարած ի գաւառս, վերջերս մայրաքաղաքս եկած և հոս այլ և այլ նկատումներով չկըրնալով առանձինն գրասենեակ մը բանալ, կը փափաքի փաստաբաններու քով օգնականի կամ գրագրի պաշտօն ունենալ և կամ փաճառատանց մէջ ծառայել այս տեսակ գործերով: Գաղղիներու մէջ ևս յանձն կ'առնու թէ յիշեալ լեզուաց և թէ իրաւաբանութեան դաս տալ: Դիմել Մաղիկի խմբագրութեան: 4 (3-4)

«ԳԻՏՆԵԼ ՆՈՒՅՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳՈՒՈՒ ՀՈՍՈՐ»
(SAVOIR POUR PRÉVOIR, AFIN DE POURVOIR)

Օկիւսթ Գոնդը, գրական փիլիսոփայութեան հիմնադիրը, այս բառերով կը բանաձնէ գիտութեանց գործնական օգտակարութիւնը: Գիտութիւնք կարող կ'ընեն զմեզ նախատեսել ինչ որ պիտի լինի, և հետեւապէս կը մղեն զմեզ միջոցներ հնարել առաջն առնելոյ համար չարեաց, երբ կը գուշակեմք թէ ինչ որ պիտի պատահի՝ չար է: «Նախատեսել» ըսինք, բայց միթէ տրուած է մարդուն նախատեսելու ձիրքը, ապագայն գուշակելու կարողութիւնը: Ո՞չ ապաքէն ապագայն ծածկեալ է՝ կ'ըսուի՝ մարդոյն աչերէն թանձր քօղով: մարդ գիտէ՞ թէ ինչ պիտի լինի ինքն յետ մի ժամու: Առ առաւելն այդ կարողութիւնը՝ բաժինն էր միայն ի հնումն կարդ մ'անձանց որք մարդարէ կոչեցան: Բայց և մարդարէից դարն ո՛չ եւս է այլ: Ի՞նչպէս ուրեմն գիտութիւնք կարող են ընծայել մարդոյն այս զօրութիւն որ գերմարդկային կ'երևայ և հէք մահկանացուներու սահմանաւոր կարողութեանց հետ անհաշտելի: Այո՛, սակայն, գիտութիւնք կուտան այդ զօրութիւնք, և արդէն չեն նոքա այլ ինչ բայց եթէ այդ զօրութիւնք Գիտութիւն մը գիտութիւն չպիտի լինէր, եթէ իրեւ արդիւնք չունենար զապառնին կանխատեսելու կարողութիւնը:

Եւ արդարեւ ի՞նչ են գիտութիւնք. — գործարանաւոր և անգործարան բնութեան երևոյթներուն մէջ գտնուող հարկաւոր կապակցութեանց և առնչութեանց ծանօթութիւնը: Արդ, երբ մարդն խելամուտ կը լինի պատճառներու և արդեանց անկողի չլթալին, երբ կ'ուսանի թէ ո՛ր երևոյթք յար կը զուգընթանան միմեանց, ո՛րք յար կը յաջորդեն իրերաց, այլ եւս դիւրին է նմա եզերաց մին գիտնալով կամ տեսնելով՝ մակարերել միւսն, տեսնելով հանգամանքներէն մին՝ յուսելով մոռք յարակից այլ յատկութիւնքն, տեսնելով նախընթացն՝ գուշակել հետեւորդն: Ո՛վ որ պատճառաց վերահասու է՝ գիտէ արդիւնքներն որք զհետ պիտի գան: Նա գիտէ այն օրէնքներն որոց բնութեան Արարիչն են՝ թարկեց շնչաւոր և անշունչ էակներն, իրերն ու հոգիները: Մէն մի գիտութիւն կարգ մ'երևոյթներու վերաբերեալ օրինաց ամբողջութիւն մ'է: Երբ մարդն ուսումնասիրեց արեւու և լուսնոյ խաւարման երևութից պատճառներն, կարող եղաւ գուշակել վայրկեանական ճշգրութեամբ արեգակնային կամ լուսնային խաւարում մը: Գրիտտափոր Գոլոմպոսի վրայ՝ իր գերմարդկային կակի՝ կրօնային երկրազածութեամբ սկսան հայլ ժամայիգի վայրենիներն, երբ նա ըսաւ իրենց թէ լուսին պիտի խաւարէր յանկարծ, մինչ Գոլոմպոսի ու անոնց մէջ եղած տարբերութիւնն մի միայն գիտնոյ ու տգիտի տարբերութիւնն մ'էր: Տգէտը կը կարծէ թէ ամէն ինչ խառն ի խառն կ'ընթացայ յաշխարհի և կամ առ առաւելն ենթակայ է գերադոյն կամքի մը քմահաճոյց: մինչ գիտունը գիտէ թէ ամէն ինչ ի բնութեան տեղի ունի անվթար կանոնաւորութեամբ և թէ ստեղծիչ գերազօր զօրութեան կամքն օրէնք է անյեղլի և ո՛չ քմահաճոյք մշտափոփոխ: Այսպէս կ'ընէ գիտունն ի խոյզ այդ օրինաց, կը հարցաքննէ զբնութիւնն որ իւր գաղտնիքներն կը պարզէ հարցափորձող մըտացն առաջի: Եթէ մէկ կողմանէ հիւսնալ պարտիմք բնութեան անվթէպ կարգաւորութեան

թեան և նորա օրինաց ընդհանրականութեան ու տեականութեան վրայ, միւս կողմանէ շընորհակալ պարտիմք լինել Ամենայնի Արարչին որ զմարդ կարող ըրած է գիտութեան, որով նա կը թափանցէ էից օրինաց և կրնայ խելամուտ անյեղլին ու ներկայէն զապագայն, ծանօթէն անծանօթն: Վսեմ կարողութիւն, որով նա գեր ի վերոյ կը կանգնի ի մէջ ամէն կենդանեաց, կարողութիւն զոր սակայն չէ հնար ստանալ անջան: Պաղոն ըսած է. « Թարգման և պաշտօնեայ բնութեան, մարդ գիտելոյն չափով միայն կրնայ զայն ճանչել: » Երկար դարեր մարդիկ միայն տարրական ու բազմամուրար փորձառութեամբ շատացան, խաւարի մէջ խարխափեցին իւր զոյր: Դիպուած կամ քմահաճոյք տեսան անդ ուր օրէնք կար, ունայն երկրաշնորով ու անհիմն յոյսերով ծփացին, և երբ իմաստասիրել ուզեցին՝ երևակայական ենթադրութեամբ կարծեցին մեկնել զբնութիւն: Մանաւանդ թողով մօտաւորն ու հասանելին՝ բացականին ու անհասին խելք հասցնել ճգնեցան: չէին գիտեր թէ ինչ է ջուրն, և ջուրն կը գնէին՝ ամենայնի սկիզբն, կամ թէ օդն, կամ թէ հուրն, նոյնպէս առանց աւելի ինչ գիտնալու այս վերջնոց բնութեան վրայ: Ճշմարիտ գիտութեան սկիզբն կրնանք ըսել թէ ի Պաղոնէ և ի Տեքարդայ է, որոց առաջինն պարզեց խելամուտութեան (induction) կարեւորութիւնն ու կանոններն և երկրորդն ուսոյց տարակուսիլ խնդրելու և գտնելու համար: Մտնելով այն ճամբուն մէջ զոր բացին այս կրկին հանճարք, մարդն սկսաւ գիտել, զննել, փորձարկել, վերլուծել, վերադադրել, և գիտութիւնք թուի առնն, նոքր հիմնուեցան, երկնի երկրի և ծովու ծոցք խաղարկեցան, և մարդկութիւնն երկու հարիւր տարուան մէջ շատ աւելի բան սովորեցաւ ու գիտեցաւ քան հինք հազարաւոր տարիներու մէջ: Այսօր մանուկն աչք մը կը նետէ խոզովակի մ'երկայնքը նըշանակուած մի քանի թուոց վրայ ու կրնայ քեզ գուշակել անձրևոտ կամ պայծառ օդը, կամ թէ աշխարհագնտին վրայ գրուած ինչ ինչ թուանշանաց շնորհիւ ըսել քեզ թէ ինչ կ'ընեն այս վայրկեանի նիւ-եօրքի բնակիչք:

Բայց է՞ր տրուեցաւ մարդոյն գիտնալու և նախատեսելու այս կարողութիւն: Ըով հետաքրքրութիւն մը յագեցնելու համար. — անտարակոյս ո՛չ: Իրաւ է թէ եթէ գիտութեան օգտակարութիւնն միայն այդ իսկ լինէր, չա՛տ էր, վասն զի մարդկային էակն, ի ընէ հետաքրքիր, կը նեղուի անծանօթէն ու լոյս կը խնդրէ միշտ զինք շրջապատող խաւարին մէջ, բայց գիտութեան օգտակարութիւնք շատ աւելի հեռուն կ'երթան. մարդ կ'ուզէ գիտնալ կանխատեսելու և կանխահոգ լինելու համար. իւր նախատեսութիւնքն իսկոյն յօգուտ իրեն ի գործ կը դնէ, կիրառութիւնքն կ'ընէ իւր գտած օրինաց: Ուսողութիւնք կը տանի զինքն ի շինութիւն մեքենայից որք կը գիւրեն իւր գործն՝ տալով իրեն օժանդակ երկաթեայ անխոնջ գործաւորներ. աստեղագիտութիւնն նպաստ կը մատուցանէ աշխարհագրութեան ու նաւարկութեան. բնագիտութիւնն իրեն կ'ընծայէ հեռագիրն ու հեռաձայնն, շանթարգելն ու ելեկտրական գործիներն. տարրաբանութիւնն՝ նոր մարմիններ առաւել պարզ կամ բաղադրեալ քան որքան են ի բնութեան և յորոց օգուտ կը քաղէ այլազան պիտոյից համար. կենսաբանութիւնն կը յառաջացնէ զբժշկութիւնն որ, բաց ի տարրաբանութենէ, օգուտ

կը քաղէ բուսաբանութենէ և հանքաբանութենէ ցաւը փարատելու և կեանքը երկարելու համար: Կարելի՞ է համառօտել աստ անթիւ կիրառութիւնքն գիտութեանց ի մեքենագործութեան, ի ճարտարութեան, յերկրագործութեան, ի գեղարուեստս, ի բժշկութեան: Եւ, ամէն օր, նա որ գիտէ՝ կը նախատեսէ ու միջոցներ ի գործ կը դնէ նըպաստաւոր արդիւնքը փութացնելու կամ վընասակարն արդիւնքը համար: Իսկ տգէտն կը կրէ իրաց ճակատագրային (fatal) հետեանքն, ինքնին ընդ առաջ կը դիմէ ուստի զգուշանալ պարտ էր, յանգէտս կը պարէ անդնդին եղբրաց վրայ, յօժարութեամբ կ'ըմպէ թոյնն իրեւ դեղ և դարման, ապահով աներկեան կը ննջէ ուր երկնջիլ պէտք է, և սնտոր վախերով կը տագնապի անդ ուր հարկ է լինել անկասկած: Գիտութիւնը մտաց աչքն է. առանց անոր կոյր է մարդն ու չգիտէ թէ ո՛ւր կը գնայ, ո՛ւր կը կոխեն իւր ոտները: Գիտութիւն մարդոյն ընծայեց այն բիւրաղզի դիւրութիւններ որովք նա հեշտ գործեց իւր կենցաղն երկրի վրայ և զարդարեց իւր բնակարանն: Գիտութիւն պիտի տայ տակաւին իրեն՝ ճանչել ընտելիւնն բազում իրաց, օրէնքներն բազում երևութիւնք որք կը մնան ցարգառանց բացատրութեան, և յայնժամ միայն կարելի պիտի լինի ի գործ դնել դեռ շատ մը նախահոգակ գործողութիւններ՝ վանելու համար դեռ անդարման մնացած ցաւեր և ստանալու նորանոր դժբաղդներ: Պատի՛ւ գիտութեան:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՐԱՆԱՅԻ ՄԸ ՊԱՏԿԵՐԻՆ ԵՏԵՒ

ԲՈՒՐԱՍԱՏԱՆԻ

Դեռափրքիք
Վարդ մ'է կարծես,
Սա գեղալի
Դէմքն անմարտի:

Եւ կամ ռուսան
Անթիւ սիրուն,
Հագիւ ծրծած
Անմահական
Յօղը այգուն:

Այլ սա հրեասակ
Մ'է անդրադարձ,
Աղու աչուի,
Ոսկեգիսակ
Թեւիկներով:

Սիրոյ ճրկար,
Ա՛ն, սէր քաղցրիկ
Անմեղուքեան
Զբնաղ սխալար,
Ի՛նչ լուրջ մանկիկ:

ԲԱՐԵԿԱՄՆ

«ԾԱՂԻԿ»Ի ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Աղեհաւանդիւ. Ժ. Ստացանք, շնորհակալութիւն. Կատանար կանոնաւորապէս. շարունակեցէք:

Էսիրնէ. Ժ. Զեր յանձնարարութեան համաձայն կարգադրուեցաւ:

Գաթը-գիւղ. Պ. Շնորհակալութիւն Զեր շնորհաւորութեան և բարեմաղթութեանց համար:

Պանսում. Օ. Զեր Նամակն առինք. կ'սպասեմք:

Մաղնիսա. Դ. Կարգացէ՛ք վերեւ պատասխանը:

Սուկուլու. Մ. և Կ. Շատ լաւ:

ՎԱՂԵՄԻ ԳԵՐԵԶՄԱՆՔ

Ահա մեր սիրելեաց հանգիստը ուր ի քնարան շիրմին կը ննջեն մեր հարք. ե՛կ, ո՛վ բարեկամ, մի լոյս ժպիտ արձակենք գերեզմանին տխուր մթութեան վրայ: Ինչո՞ւ արդեօք չեմ սիրեր Եւրոպացւոյն դամբարանը. հո՛ն, ի գուր կը ճգնին ծաղկանց տակ խեղդել մահուան արհաւիրքը. միթէ գերեզմանատան պչրանքը կ'մաղքի մը սոսկալի քրքիւն՝ չի՞նք մանիր, և հոն՝ ուր գուարթունք կը հսկեն՝ ի՞նչ պէտք մարմարեայ հրեշտակներու. վերջապէս հոն ամէն ինչ քեզ կը մոռցնէ անցեալը, քու սրտիդ չի խօսիր և կենդանազուրկ մեռելութիւն է յաւէտ... եթէ կրնաս, անմահութիւն երազէ մեռելներու քաղաքին մէջ:

Այնպէս չէ իմ աղիւս ազգիս. վաղեմի գերեզմանատունը. տե՛ս, քանի՛ վսեմ է իւր թեւատարած, հսկայ բռնչիւններով (չէք լէմպիճի ծառ), իւր հնաւուրց տապաններով, իւր մամուկապտ խաչքարերով: Հոս, երրորդ հովը չնչէ՝ հառաչելով կ'անցնի սաղարթին մէջէն, և երբ հոգմոց հեծհեծող շունչը դադարի, շուրջը խորհրդաւոր լուծիւն մը կը տիրէ. հոգիդ կը յափշտակուի և անորմափակ առանձնութեան մէջ անցեալը իրրեւ իրականութիւն կը պատկերանայ աչացդ առջեւ. ցնցեցեալներ են որ յարութեան յուսով հոն կ'ընկողմանին, ինչպէս մեր լեզուին միայն յատուկ եղող բառը քեզ լաւ կը յիշեցնէ զայս: Այն հողվարքը զոր քաղ կ'անուանես, քաղաքի մը թաղերէն տարրեր չէ այլ եւս քեզ համար: Ո՛հ, քանի՛ քանի՛ անգամ մեռելոցին օրը երկիւղած մի զգածում գիս ի գերեզմանատուն մըն է ունկնդրել զարիւպ Տէր-Տիրոջ որ իւր սուրբ պաշտօնը կը կատարէ: Այսպէս ուրեմն, ո՛վ բարեկամ, ազգային գերեզմանատունը լի է հաւատով, յուսով և անմահութեամբ:

Յառաջ մատի՛ր. գերեզմանին դուռը մուտքըդ արգիլող սահապան չը կայ. հոս է հանգստաքարը որոյ ներքեւ կ'ամփոփուին նահատակի մը նշխարը: Ինչո՞ւ են արդեօք տապանին կրկին խռոշները — ատեն մը մեր սիրելեաց վրայ արցունք կը թափէին և մեր սգոյն ցողով կը լճանար խռոշը: Գիտե՞ս թէ ինչո՞ւ անվրէպ է գիրը տապանագրին ճակատը կը գետեղուի — ու էն Աստուած կը հովանաւորէ քրիստոնէին գիրքը: Ինչո՞ւ են քանդակեր գործիւններու պատկերը — Այս աշխարհիս մէջ մարդոյս բաժինն է աշխատութիւն:

Ափսո՛ս, հազար ափսո՛ս, վաղեմի գերեզմաններն այսօր արեւու յանդիման կը մերկացուին, և մեռելներու կողովաւորով Ամենակալին տաճարներ կը կառուցուին:

Կանգնեցէ՛ք, ո՛վ հայրեր, դուք որ խրճիթներու մէջ կը բնակէիք, որպէս զի ձեր քսակէն առատաւնք և հոյակապ ժամեր կառուցանէք. ձեր անարժան յաջորդները գերեզմանակապուտներ են միայն, որ իրենց ապարանք կը կամին և Աստուծոյ՝ մատուռն ալ շատ կը տեսնեն:

Հիմա, վաղեմի գերեզմանատան մէջ դալար խոտը կը ծածկէ մեր սիրելեաց հողակոյտը. սպառ սպառ քարեր մամուռով են ծածկուեր. օր մը թերեւս եղինձ և տատառի ծածկեն մեր աչերէն այն գերեզմանը ուր կը հանգչին Գաթը-գիւղ և երեւելի ամիրաներ՝ որոց յիշատակը այնքան քաղցր է աւանդապահ սրտին: Բայց ո՞ր սրբապիղծ ձեռք կը յանդգնի վերցնել այնպիսի տապանաքարեր, որոց վրայ

հանգեշունչ բանաստեղծութեանց հաւասար զարդիւս և ո՛չ մի բանաստեղծ կարող է յերկրիւ: Տե՛ս, սա զոյգ մը հարազատաց տապանը, անոնք՝ թեւ թեւի տուած՝ մայրենի գրկերէն դէպ ի վեր երկինք սլացան, բայց հէգ ծնողը յաւիտեան մշտնջենաւորեց անոնց յիշատակը յետագայ տողերով:

ՍԻՐԱԿԱՆԵՆ ՍԱՐԲՔ ԴԵՊՈԶԻՏ

ԸՂԱՅԻ ՈՐԳԻ ԵՓՐԵՄ

Երբ կը ծաղկէի
Ես վարդի ճրման,
Արմաշու չորցուց
Զիս մանրն դաժան.
Մանուկ էի ես
Ինքն սարեկան,
Կարճըցուց օրերս
Խորեց յայս տապան.
Բայց շատ մի լաւ դուք,
Ծրնողք Սիրական,
Յիսուսն է յոյսս
Զի գրկեր զիս Ան:

Յամի Տեառն 1836 Սեպտ. 30

ՍԻՐԱԿԱՆԵՆ ՍԱՐԲՔ ԴԵՊՈԶԻՏ

ԸՂԱՅԻ ԴՈՒՍՏՐ ԻՍԿԱՆՔ

Անորձն մահուան ուժն
Ինձի հասաւ,
Անուշիկ առելս
Ինձի շատ տեսաւ.
Կաղաչեմ, Փրկի՛չքս,
Այս խաւար բանէն
Անմահ կեանքով զիս
Ողջցուր նորէն:
Հարս եկայ քեզի ես,
Յիսուս իմ Յիսուս,
Պզտիկ է սարիքս,
Բայց մեծ է յոյսս:

Յամի Տեառն 1836 Սեպտ. 14

Արդեօք մեծ ժանտամահին տա՛րին էր, արդեօք ինչո՞ւ լեցեր է այս թաղը վաղամեռիկ էակներով: Ժամանակը կ'եղծէ ամէն ինչ, կը բուսցնէ մամուռը որ տապանագիրը կը ծածկէ, կ'իջեցնէ անձրեւը որ շիրիմներու չաղախը կը քայքայէ, բայց աւանդութիւնը կը յաւերժացնէ մեր հարց յիշատակն ի մեզ:

Թող դադարի եղբրամարց ողորդ վաղեմի գերեզմանատան մէջ, թո՛ղ հին ժամագրոց մէջ այդ ողբերը սերտող ա՛լ չը գտնուի, բայց քանի որ իմ այս մաշած կուրծքս դեռ իւր վերջին շունչը չէ արձակած, աւանդութեան բերանը պիտի լինիմ, պիտի սիրեմ ու սիրել տամ իմ նախնեացս քնարանը, ուր և մեք պիտի իջնեմք օր մը անխռով ննջելու: Թո՛ղ բռնչին շարունակէ իւր խորհրդաւոր հովանին տարածել մեր հարց սուրբ շիրիմներուն վրայ, խաչքարը և տապանը չը պակսի գերեզմանէն, և թաղը իւր սահմանը չը կորսնցնէ:

ՄԻՂԱՆ ԹՈՎԱՆԵՆԵԱՆ

ԽՂՃԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

(Մանրագրի տեղադրում կեսերէ)

(Շար. եւ վերջ)

Այս միջոցիս յանկարծ անիւներու ձայն մը առաւ հեռուէն. ուշաբերեցաւ, զգաց որ շատ վտանգաւոր դիրքի մը մէջ կը գտնուէին. պէտք էր ամուսինը տուն փոխադրել, բայց ի՞նչպէս և որո՞ւ օգնութեամբ. բարեբաղդաբար պարապ կառք մ'էր որ սրարշաւ կրնար թանար. մէկ հրամանով կեցնել տուաւ զայն, հազար ու մէկ դժուարութեամբ յաջողեցաւ մէջը զետեղել ամուսինը, որ հետզհետէ ըստ թափելու վրայ էր, յետոյ ինքն ալ նստելով՝ երբ դռնակը գոցեց, այն ատեն միայն զգաց որ սաստիկ մտած էր:

Տասը վայրկեան վերջ բարեբաղդ կառապանը կրկին կրկին անգամ համրելով առած մէծիտները, կ'ըսէր իւրովի. «ո՞ր է թէ ամէն օր սաստիկ սիրահարներու հանդիպէի»:

Խ. Գ. և որդի վաճառատունը՝ սուղ ժամանակի մէջ հսկայաքայլ յառաջադիմութիւն ըրած էր. ամէն ոք գիտէր որ տասն տասնըհինգ տարի յառաջ պարզ խանութէ մը քիչ բարձր դիրք ունէր այդ հաստատութիւն. սակայն մեր այս պատմութեան անցից ժամանակ՝ իւր բազմաթիւ ճիւղերով գրեթէ առաջնակարգ ազդեցութիւն ձեռք բերած էր հրապարակին վրայ թէ՛ ներածութեանց և թէ՛ արտածութեանց մասին:

Հասարակութիւնը տարբեր տարբեր մեկնութիւններ կ'ստեղծէր այդ հարստութեան ազդեցութեան նկատմամբ՝ որոց մէջ մեծ տեղ կը բռնէին բաղդատումներն ու Ամերիկայի պատերազմը, սակայն բոլորն ալ ենթադրութիւններ էին և ոչ ոք ստույգ տեղեկութիւն ունէր թէ նախկին խանութպանը ի՞նչպէս յաջողեցաւ մինչեւ իսկ բարձրագոյն պաշտօնատուններէ իւր հասցէին ուղղեալ գրութեանց վրայ ճշմարտութիւն վաճառական և տիրուղոսը գրել տալ:

Ընթերցողաց ծանօթ. դէպքերէն երեք ամիս վերջ, գարնան առաւօտ մը, վերոյիշեալ վաճառատան բեռնակիրներէն մին՝ համետը կըռնակը՝ դաւթին դրանը քով կեցած, կոտորտուած տաճկերէնով մը բարձր բարձր սակարկութիւն կ'ընէր սայլորդներու խմբի մը հետ՝ որոնք չէին համաձայնեցող առաջարկուած գնով բեռները փոխադրել. յանկարծ ձեռք մը դպաւ բեռնակիրին ուսին. այս վերջինը ետին դառնալով՝ զարմացմամբ և քննողական ձեւով մը Արեւուդ. մեռնիմ, Պ. Բարկէն, դո՞ւ ես, ըսաւ. ինչո՞ր է իշալլահ առտուանց. եօթնսալլահ կէնէ իշալլահ ֆոս պըտոր գաս. խեղճ եմ Պ. Բարկէն. քուկ երթալիդ պէ՛րի է որ, տիրութիւն տիրութիւնէ համալընքս չեն տարը. ես ընքն առապաճոց հախը քէսէյէս կուտամը. թիճճարներէն վարայոր ուղեմ նը, տէ՛ֆ կէնէնը:

— Աղան նե՛րսն է, հարցուց Բարկէն, բեռնակիրին ձառը ընդհատելով:

— Եւսմուրճախը իր օտան է, գիր գրէյը՝ պատասխանեց բեռնակիրը, և տղու մը պէս նազ ընելով՝ կամաց մը «էսի հա՛րսն է» ըսաւ, նուարդը ցուցնելով՝ որ ընկերացած էր ամուսնոյն:

Հաստատական նշան մ'ըրաւ Բարկէն և նուարդի հետ մտան վաճառատունէն ներս որ անծանօթ չէր իրեն և որոյ իւրաքանչիւր մասը տարբեր տարբեր յիշատակներ կը զարթուցանէր մտքին մէջ:

Ձեակերպութիւններ պէտք չ'է վաճառականի մը մասնասէնեակը մտնելու. բաւական է որ գործ մ'ունենայ մարդ. կարեւոր կամ անկարեւոր, ի՞նչ որ ըլլայ, գործի առջեւ կը խոնարհին այդ մարդիկ և առջի երկու խօսքերէ հատեկէն վերջն է միայն որ եթէ չհազարգիւ տեսնեն՝ կը թողուն զբաղումն, եթէ ո'չ, կը շարունակեն իրենց գործն առանց և ոչ իսկ ներողութիւն խնդրելու: Այս պայմանաց անտեղեկ չէր Բարկէն և առանց թեթեւեղ ներս մտնելով մասնասէնեակէն, ողջունեց իւր նախորդ տէրը, որ միշտ ձաղատ, միշտ երիտասարդ, միշտ զբաղեալ, և վերջապէս միշտ մի և նոյն լուրջ մարդն էր, տարիները կարծես երեք ազդեցութիւն չ'ունէին այս երկաթեայ վաճառականին վրայ որ իւր կինացը մէջ բաց ի գործէ ուրիշ բան չէր ճանչցած. ո'չ շահը և ո'չ վնասը չէին կասեցներ իւր բազուկները գործելէ և որ ամենայն իրաւամբ իւր բոլոր պաշտօնեայներէն ալ կը պահանջէր նոյնը:

Խ. Գ. և որդի վաճառատան պէտք պահ մը չը կրցաւ իւր զարմացումը զսպել՝ այս երկու ամուսնեան անակնկալ այցելութեան առթիւ. իւր ամուսնանալէն ի վեր քսան տարի անցած էր, և օր մը կնոջը թեւ մտնելով վաճառատուն բերած չէր. երբեք չէր սիրեր թեթեւութիւն և բնաւ չէր յուսար որ Բարկէն իրեն հանդէպ այդչափ անպատկառ դրու. նուր. շատ վատ սպաւորութիւն ըրաւ իւր վրայ նորապսակներու այս անամօթութիւնը ու բոլոր յանցանքը նուարդին վերագրեց. իսկոյն ջնջուեցաւ Բարկէնի վրայ ունեցած համարումն ու այլ եւս սկսաւ նկատել զնա իւր իւր կնոջ գերին. սակայն իբրեւ կենցաղագէտ մարդ՝ արտաքուստ դժգոհական ո'ւ է նշան չը ցուցնելով, գլխովը հրամցուց գանոնք որ նստին, և գիրք վերջացնելէ յետոյ՝ հայրական գործով մ'ըսաւ Բարկէնին. «Ինչո՞ւ այս օրին դուրս կ'ելնես. դեռ տկար ես, քանի մ'օր ալ սպասելու էիր և ապա կրնայիր պտուղներ տրիկնը՝ որ բնականաբար շատ նեղուած ըլլալու է երկարատեւ հիւանդութեանդ առթիւ. հարկը անգամ մտադրեցի քեզի գալ. բայց սա գործերէն օձիքս ազատած չ'ունիմ որ քիչ մը չորս կողմն նայիմ. չը գիտեմ գերեզմանին մէջ հանգիստ պիտի մնամ»:

— Ծնորհակալ եմ ձեր հոգածութենէն — պատասխանեց Բարկէն — ես ալ կ'ուզէի քիչ մ'եւս սպասել, սակայն խիստ կարեւոր գործի մը համար ստիպուեցանք հոս գալ:

— Միթէ տրիկն ալ քեզի գործակից է:

— Այո՛, այս պարագայիս մէջ:

— Պրափօ՛, շատ դովելի է, Եւրոպայի և մինչև իսկ մեր Ռուսահայոց մէջ շատ տեղասանկ է, կիներն ալ կը մասնակցին արանց տուր և առին, և եթէ ես ալ համոզուած ըլլայի թէ անպատեհութիւն մը չ'իսկ, կը փափագէի որ աղջիկներս հոս գան ու կառավարեն գործերս:

— Սակայն տուր և առի համար չ'է, պատասխանեց նուարդ, բռնազբօսիկ ժպիտով մը:

— Ուրեմն ի՞նչ գործ է ըսածնիդ, հարցուց վաճառականը կասկածոտ վարանմամբ:

— Գանի՞ տարի է որ ես Ձեր քով կը ծառայեմ, ըսաւ Բարկէն:

Այս վճռական հարցը ցնցեց վաճառականին ամբողջ կազմուածքը և քիչ մնաց որ վար գլտորէր աթոռէն. ի՞նչ կը նշանակէր այս կտրուկ հարցումը — անոնք միայն որ քսան

տարի մի և նոյն անձին հետ աշխատած, մի և նոյն անձին գիտութեամբը խորհած, խօսած, մութին մէջ գործած, և ապա առանձին ի ըյս ելած են, անոնք միայն կրնան կշռել Խ. Գ. և որդի վաճառատան պէտին արդի ծանրակշիռ վիճակը՝ հանդէպ քսան տարուոյ պաշտօնէին. եթէ «տասն հազար ոսկի կ'ուզեմ քեզմէ» ըսէր Բարկէն, այնչափ դժուարին չափի գար իւր տիրոջ որչափ այս հարցը:

— Փսան տարի և չորս ամիս, պատասխանեց վաճառականը, ջանալով ծածկել յուզումը:

— Եւ այդչափ ժամանակուայ աշխատութեանս վարձքը վճարած էք, այնպէս չ'է:

— Ինչպէս որ կը խոստովանիք:

— Ուրեմն չեմ ընդունիր ամուսնութեանս առթիւ Ձեր ինձ նուիրած հինգ հազար ոսկին. առէք Ձեզ կը վերադարձնեմ զայն, ըսաւ և պանքնօթներով լի դրամապանակ մը նետեց գրասեղանին առջև:

— Ի՞նչու, միմայ վաճառականը խեղդուկ ձայնով մը:

— Որովհետեւ Հաճի Յարութիւնի ուրուականը միշտ զիս կը հալածէ, և ներսի դիէս բան մը միշտ զիս կը սոսկացնէ. այնպէս կուգայ ինձ որ այդ դրամին ձեռք միսած օրս պիտի մեռնիմ, սատկիմ:

— Բարկէն... գոչեց վաճառականը մահատիպ թալուկով մը:

— Անկարելի է, տէր իմ, անկարելի. կրկնեց Բարկէն, Հաճի Յարութիւնի որբերը կը մուրան:

— Թշուառական, միթէ զիս խեղդելու եկար առտուանց, կամ մաց վաճառականը, հազիւ ինքզինքը զսպելով:

— Ո՛չ, անմեղներու արիւնէն ձեռքս լուալու և հանդարտ խղճով ապրելու եկայ:

— Լռէ՛, շան սատակ, հիմակ ոտքիս տակ կը տորեմ՝ քու վատ գլուխդ աչքերէդ ծոնգերէդ գայ. քսան տարի է հացս կուտես և հիմակ ալ զիս գրաւարտելու ելար:

— Զրպարտութիւն չէ, տէր իմ. եթէ դուք մոռցաք, իմ երեակայութեանս առջեւէն և ո'չ մի օր հեռացած է այն բարեկեցիկների երեկոյն, ուր երկու բարեկամ, դուք և գէր ու դեղին պէտերով Հաճի Յարութիւնը, միասին զուարճանալ սկսաք իւր սենեկին մէջ. Բաց ի մեր երեքէն ո'չ ոք կար հոն, բոլոր խանեցիները դուրս թափուած էին բարեկեցիկների գլխակաւորները դիտելու. դուք ինձ ապսպրեցիք որ սուրճ եփեմ. սուտ պատրուական մը դուրս ելնելով՝ չը գիտեմ ի՞նչ բաղադրութիւն խառնեցիք Հաճի Յարութիւնի դաւաթին մէջ, որ խմելէ քառորդ մը վերջ սկսաւ փոխել և օձերու նման գալարիլ. ո՛հ, երբեք մոռցն չը պիտի ելնէ խեղճին արձակած հառաչներն ու ողբերը. հարկը անգամ բժիշկ մը, բժիշկ մը կը գոչէր, և դուք «բան մը չէ կ'անցնի» ըսելով սուտ մխիթարութիւն կը կեղծէիք. քսան տարին անցած է այս ոճիւրէն ի վեր. այն ատեն տղայ էի, բան մը չէի հասկնար, բայց այժմ կ'իզգամ որ դուք, տէր իմ, դուք թունաւորեցիք զինքը որ վերջ ի վերջոյ կասկածելով ձեզմէ, սկսաւ բարձրաձայն օգնութիւն գոչել և անիծել զձեզ որ մէկ ձեռքով բերանը բռնած միւսով դրամարկղին բանալին կը փնտռէիք ձեր մահամերձ զոհին գրպաններուն մէջ. ա՛հ կը սոսկամ յիշել այն վերջին վայրկեանը. երբ թշուառ Հաճի Յարութիւնը, աչքերը դրամարկղին վրայ սեւաւած, աղապները կը կըրճըտցնէր՝ տեսնալով իւր հարստութեանց ձեր

ձեռքով կողոպտուելը, դուք՝ չնչին պատ-
րուակաւ մը զիս դուրս զրկած՝ ըլլալով զձեզ
առանձին կը կարծէիք. սակայն չգիտեմ նա-
խանախաղութիւնը թէ սատանան գրեց զիս որ
տախտակորմին միւս կողմն անցնիմ ու խոհա-
նոցին մէջ բացուած ծակէ մ'այս ամէնը տես-
նեմ. իսկ թէ բան մը տեսած չ'ըլլայի և ա-
մէն մարդու նման ես ալ հաւատայի թէ,
Հաճի Յարութիւնը իւր անբաւ հարստու-
թիւնը խաղի և զեղխութեանց մէջ շուայլե-
րով՝ անձնասպան եղած է յետին չքաւորու-
թեան մէջ, և թէ դուք արդար վաստակով
գիշած էք այսչափ հարստութիւն: Ո՛հ, զըր-
պարտութիւն չէ կարելի համարիլ այսչափ
մանրամասն ապացոյցներով հաստատուած ի-
րողութիւն մը. դո՛ւք, տէր իմ, դուք ան-
խելք չ'էիք և ո՛չ ալ այնչափ վեհանձն՝ որ
քսան տարի արժէքիս կրկնապատիկը վճարե-
լէ յետոյ, հինգ հազար ոսկոյ ալ նուէր մը
տայիք ինձ, մինչդեռ անդին խեղճ պաշտո-
նէից արժէքին հազիւ կէսը կը վճարէիք, այն
ալ հազար թուր ու մուրով. դո՛ւք կը կաս-
կածէիք իմ վրայ և այս գումարով կ'ուզէիք
բերանս գոցել. ես ընդունեցի զայն՝ երբ դեռ
ամուրի էի. որովհետեւ այնպէս կը կարծէի
որ երջանիկ ընտանիք մը կազմելու համար
մարդս անպատճառ հարուստ ըլլալու է. նը-
շանուեցայ այս հրեշտակին հետ զոր չ'էիք
խղճահարեք պահ մը առաջ ծաղրել. տարի մը
գաղտնի պահեցի իրմէն՝ ամէն բան, ծա-
կայն և ոչ մի ժամ հանգիստ ունէի. ամէն
անգամ որ ձեռքս այդ արեան գնոյն մօտե-
ցնէի, Հաճի Յարութիւնը դէմս կ'ենէր: Ե-
րեք ամիս յառաջ թերթի մը մէջ համանման
ոճրագործութեան մը հանդիպեցայ, սակայն
այս վերջինին հեղինակները ձեզի չափ ճար-
պիկ չ'ըլլալով, իրենց օձիքը ձեռք տուած
էին. վախ մը, երկիւղ մը, նախապաշարում
մը գրաւեց զիս. այնպէս կը կարծէի որ ոս-
տիկանները բնակարանս պաշարած՝ զիս ի դա-
տարան կը հրաւիրեն վկայութիւն տալու Հա-
ճի Յարութիւնի սպանչին համար. ժամերով
տողորուեցայ այս մտառանջութեամբ. չգիտեմ
ի՞նչ ըրի. բայց ազոտ կերպիւ կը յիշեմ որ
ծով նետուելու ժամանակս ամուսինս զիս
փրկեց. արդեօք խեղագործ էի — չը գի-
տեմ. երեք ամիս հիւանդ տառապելէ յետոյ,
այս զիւրեք պատմեցի ամէն բան ամուսնոյս և
որոշեցիք ձեռք չը գալնել այդ անիծեալ
գրամին որ մոտած տեղը թշուառութիւն, ողբ
ու կոծ կը սերմանէ:

Բարկէն դեռ աւարտած չ'էր իւր խօսքը,
երբ վաճառականը բողբոլին զգլխեալ « կոր-
սուած եմ, կորսուած եմ, մոտենի՛չ, դուռա-
ճա՛ն, պուտայ մազերը քաշելով և կռուփները
սեղանին զարնելով:
— Ընդհակառակը մեզմէ վախճալու տեղի
չ'ունիք, ըսաւ Նուարդ. եթէ ձեր խիղճն
հանդարտ է, եթէ կրնաք ամէն օր վախտել
ձեր զոհին այրին ու որրերը ու անոնց դրա-
մով ձեր զաւակաց ապագայ պատրաստել:
Մեր մասին անհոգ եղիք. մենք գիտնալով
հանդերձ այս ամէնը, մտադիր չեմք մէկու
մը բան յայտնել մինչեւ այն օրը՝ յորում ար-
դարութիւնը ձեռքը երկնցնէ ձեր վրայ. բա-
ւական է որ մենք մաս չ'ունենանք այդպիսի
վաստակի մը մէջ. սակից անդին մեզ չը պատ-
կանիր, աւելի լաւ է ազգատ բայց հանդարտ
խղճով ապրիլ քան թէ մեծափարթամ երեւիլ
և ամէն օր տառապիլ. այդ անիծեալ հինգ
հազար ոսկին այնչափ ծանրացաւ ամուսնոյս
խղճին վրայ որ քիչ մնաց անձնասպանութիւն

գործել տար իրեն. ուրեմն քանի որ քու
խիղճդ հանդարտ է, ա՛ռ, դուն վայելէ այս
արեան գինը. քուկդ քեզի. ե՛լ, Բարկէն,
հեռանա՛ք ասկից — ըսաւ աթոռին վրայ քա-
րացած ամուսնոյն Աստուծոյ վրէժխնդրու-
թեան ժամը մօտեցած է այս հաստատութեան
վրայ. գոնէ մենք ազատ գտնուինք:

Եթէ գետինը բացուէր ու զինք կուլ տար,
եթէ երկինք պատուէր ու շանթեր տեղար գըլ-
խուն, այնչափ չը պիտի դողար Խ. Գ. և որ-
դի վաճառատան պետը որչափ այս արդար
կշտամբանաց առջեւ. բարեկամութիւնը տեղի
տուած էր երկիւղին և սրտին բարախումը
զգալի կերպիւ կը լսուէր կուրծքին տակէն,
այնչափ արդարացի էին ժամէ մը ի վեր խօս-
ուածներ՝ որչափ ճշմարիտ. քառորդէ մը ի
վեր ընկճած էր կատարելապէս, և տարինե-
րէ հետէ յապաղող ծերութիւնը նոյն հետայն
կաշկանդած էր ոճրագործը. աչաց մթագնում,
գլխու պոսոյտ, ծնգաց դողդէջում, բոլորն
ալ աստիճանաբար յաջորդած էին իրարու.
միմիայն խեղագործութիւնն էր որ կը յապա-
ղէր. նոյն պահուն կը ջանար վախել երեւա-
կայութեան քսան տարուց անցեալը, սա-
կայն ո՛ր կողմն ալ նայէր, Հաճի Յարութիւ-
նին աղբսարկու աչքերէն դուրս բան չ'էր
տեսներ. ականջները կը գոցէր չը լսելու հա-
մար, սակայն ներսէն կ'առնէր զրկած որբե-
րուն սովատանջ աղաղակը. կը զարմանար որ
ի՛նչպէս դիմացաւ արիարար այդչափ ոճիր-
ներ գործելու և հիմակ երկու ստրուկներ
զինքը կը խեղագարցնեն. յանկարծ գլուխը
վեր առաւ, և տեսնելով որ հեռացած էին
չարագուշակ ամուսնիքը, գլխու պոսոյտ մը
զգաց. թուղթ մ'առաւ և դողդէջ ձեռքերով
հազիւ կարողացաւ երկու տող բան գրել.
պահարանի մը մէջ փակեց զայն և հասցէն
գրելէ ու կնքելէ վերջ, գրպանի փոքրիկ վեց-
հարուածեանը հանեց, առանց թեթեւելու
զնդակ մը պարպեց բերին մէջ ու փռուե-
ցաւ գետին:

Կէս ժամ վերջ ոստիկանութեան նախարա-
րին հետեւեալ նամակը յանձնուած էր.

«Վսեմ. Տէ՛ր,
Կը խղրեմ որ անձնասպանութեանս առթիւ
ոչ զոք չը հարցաքննէք. քանի ամիս է որ
մտադիր էի և այսօր յարմար ժամուն գոր-
ծադրեցի. յուսամ այս վերջին խնդիրս կը
յարգէք:

Պե՛տ. Գ. եւ որդի վահագուսա՛ն:
Աւելորդ է ըսել թէ անձնասպանը խեղա-
գար հռչակուելով դիաղնութիւնը կատա-
րող բժիշկներէ, մեծ հանգիսիւ թաղման
կարգ կատարուեցաւ իւր վրայ, և քաղաքին
ամենաքաջ դամբանախօսը իւր սովորական ո-
ճով գովեց հանգուցելոյն բարեմասնութիւն-
ներն ու օրինակելի վարքը և ի սրտէ բարե-
մաղթեց որ ազգին մէջ ստուարանայ իւր նը-
մաններու թիւը:

Բարկէն և Նուարդ ալ ունկնդիր էին այս
բարեմաղթութեանց:

ՔԱՅՈՒՆԻ

Ա. Զ. Դ

Ուսումն. Խորհրդէն վկայեալ Հայ. Ֆրանս.
և ըստ բաւականին Անգլ. լեզուաց, նախ-
նական ուսմանց և միանգամայն եկեղեցական
երգեցողութեան հմուտ և փորձառու ուսու-
ցիչ մը կը փափաքի պաշտօն ստանձնել մայ-
րաքաղաքիս կամ գաւառաց ազգ. վարժարա-
նաց մէջ: Դիմել անձամբ կամ նամակաւ Մէր-
ճան փողոց, Մարգարեան գրատունը:



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբթուս նախարարական արտասովոր
նիստ մը գումարուելով, նկատողութեան ա-
ռաւ Պատրիարքարանաց գործերը քննելու
պաշտօն ունեցող նախարարական յանձնաժո-
ղովոյ տեղեկագիրը:

— Յունաց Պատրիարքարանի Քաղ. Ժողո-
վոյ անդամ Տր. Զօղրաֆոս կայսերական պա-
լատ հրաւիրուել է ուր Վեհ. Սուլթանի ա-
ռաջին քարտուղար Սիւրէյյա փաշա բերանացի
զեկոյց մը հաղորդել է նմա՝ ի մասին Պատ-
րիարքարանի գործոց:

— Մեծ-Եպարքոս Բարձր. Քեամիկ փաշա
Արդարութեան և Կրօնական գործոց նախա-
րարութեան հաղորդած է Թէգքէրէ մը՝ պա-
րունակող Կայս. կառավարութեան որոշումը
ի մասին Յունաց Պատրիարքարանի իրաւա-
սութեան և եկեղեցական առանձնաշնորհ-
մանց: Արդարութեան գործոց նախարարու-
թիւնն ալ Ֆէնէրի Պատրիարքարանին հաղոր-
դեց սոյն եպարքոսական Թէգքէրէն, որ գո-
հացուցիչ լուծում մը կուտայ եղբր Յունաց
Պատրիարքարանի խնդրանաց:

— Կայս. հրամանաւ 12,500 զրուշի հան-
գըստեան թոշակ յատկացած է Կարնոյ նա-
խորդ կուսակալ Սամիհ փաշայի:

— Թուրք և գերման առեւտրական նոր
գաշնադիրը կնքուած է 21 տարուց պայմա-
նաժամով. գործադրութիւնը պիտի սկսի յա-
ռաջիկայ տարիէն:

— Զորեքշաբթի օր Յունաց Պատրիարք
Ամեն. Տ. Դիոնէսիոս Սրբազանի անուան տօ-
նախմբութիւնն էր թէ և, սակայն Նորին Ամե-
նապատուութիւն՝ ինչպէս կը ծանուցանեն
Յոյն լրագիրք՝ ոչ զոք ընդունեց:

— Պ. Քօխ անուն մարդու մը խնդրանօք
և Կայս. հրամանաւ կենդանարանական պար-
տէզ մը պիտի հաստատուի Քեաղտ խանէի
բարձանց վրայ գտնուած պարապ տեղւոյ մը
վրայ:

— Զորեքշաբթի աւուր Թ. Հագիզաթի մէջ
կը կարգամբ հետեւեալը.

Ծանուցիւք թէ Գումգարուի եկեղեցւոյ Տ.
Սուքրիաս աւագ քահանային վրայ բէվովըր
պարպող անձանց վերաբերեալ գրութիւնք
Դատական նախարարութեան յանձնուած են:

Արդ, կ'իմանամք թէ Պոլսոյ հարցաքննիչ
դատաւորք իրենց որոշմագիրն և վերաքնն-
նիչ ատենի ընդհանուր դատախազն եւս իր
դատագիրը պատրաստելով, այդ անձինք
Ամբաստանիչ ատենին կողմէ ոճրագործ ճանչ-
ցուած են: Այդ խնդրոյն վերաբերեալ գրու-
թիւնը եղեռնադատ ատենին յանձնուած ըլ-
լալով, այս ատեան կատարեց այդ անձանց
հարցաքննութիւններն և ասոնց վեցին համար
պաշտպան փաստաւոր կարգեց Շէհրի էֆէն-
տին, երկուքին համար՝ Իրֆան պէյն և եր-
կուքին համար՝ Համիտ պէյը: Յառաջիկայ
երկուշաբթի օր պիտի տեսնուի ասոնց դատը:

— Ըստ տեղեկութեանց Սապանի, Կարնոյ
Խտարէի Ժողովն դատաստանի ենթարկած է
Քղիի գայմադամ Ալի Րիզա էֆէնտին, նախ
Մէհմէտ Միւքէրրէմ էֆէնտին, եւմուսկան
նախորդ պաշտօնեայ Ալի Ալին էֆէնտին,
թղթակցութեանց քարտուղար Մէհմէտ Սա-
լիտ էֆէնտին, տասանորդի տրոց պաշտօն-
եայ Թէվֆիդ պէյն և Քղիի Խտարէի Ժողովոյ
անդամներէն Մարտիկ և Դէրդ աղաները:
Ասոնք Քղիի շրջակայ մէկ քանի գիւղերու
1305 տարուց տասանորդի տուրքերը, յատուկ
հրահանգին տրամադրութեանց հակառակ,

միացնելով մէկ վարձակալի մը յանձնած էին։ Վերոյդրեալ անձինք դատաւարտուած են մէկ ու կէս տարի պաշտօնէ զրկուելու և դըրամական տուգանաց։

— Ըստ տեղեկութեանց Միւրիւլիքի, Ձիւեա փաշայի նախագահութեամբ, կազմեալ քննիչ մասնախումբն, որ պաշտօն ունի ասիական մէկ քանի գաւառաց մէջ քննութիւններ կատարել, Բաղէշ ժամանելով քննութեանց ձեռնարկեր է։

— Միւրիւլիք կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կառավարութիւնը ձերբակալել տուած է աւազակաց խումբ մը որ Կովկասի Գարապալի կողմէն օսմանեան սահմանագլուխն անցնելու վրայ էր։ Ձերբակալման պահուն աւազակներէ երկուքն սպաննուեր և քսան և ինը ողջ ձերբակալուած են։ Մէկ մասն ևս թէև խոյս տուեր է, սակայն կը հալածուի։

— Դ. զօրաբանակի հրամանատար Ձէքի փաշա, որ Բաղէշ գնացեր էր, երեք օր հոն մնալէ յետոյ Ախլաթի ճամբով Վան ուղեւորեր է։

— Հալէպի մէջ կը շարունակէ իւր կոտորածներն ընել հնտախտը որ յերեւան ելած է նաև յ'Ուրֆա և ի Զոր գաւառ։

— Թ. Հագիգաթ իւր հինգչարթի առուր թուով ծանուցանելով թէ Եւրոպայիք Ափրիկէի մէջ իրենց կոխած տեղը կը ջանան քըրիստոնէութիւնը ծաւալել շնորհիւ իրենց միւսինարական ընկերութեանց, և շատ անգամ այն տեղերու իսլամ ժողովուրդն իւր կրօնական գաւանանքէն կը խոտորեցնեն, կ'ըսէ թէ ձեռնհաս իշխանութիւնն հարկ եղած միջոցները ձեռք առեր է յԱփրիկէ և այլուր կարող և պերճասօս քարոզիչներ զրկելու, որպէս զի երթան Եւրոպացի միսիոնարացի տընձգութեանց դէմ մարտնչին քանի և քարոզութեամբ, և հարկ եղած տեղերն տարատանոցներ հաստատեն յանուն իսլամութեան։

Նոյն լրագիրն այս գաղափարը ջերմօրէն կը ջատագովէ, գիտել տալով թէ վերջին անգամ ի Բարիզ գումարեալ գերեաց համաժողովոյ որոշմանց մէջ կան պայմաններ որք կըրնան արգելք յարուցանել իսլամական կրօնին ծաւալման դէմ։

— Գերմանական լրագիրք բովանդակութիւնը հրատարակած են այն առևտրական գաշնագրին որ յետ երկար բանակցութեանց կնքուած է Թուրքիոյ և Գերմանիոյ միջև, և որ յառաջիկայ տարի պիտի սկսի գործադրուիլ։ Այս գաշնագրով երկու պետութիւնք փոխադարձաբար իրարու կը շնորհեն ամէնէն նպատաւորեալ ազգի պայմանն, Բաց աստի, գաշնագրին կցեալ սակագին մը ի Թուրքիա մուծեալ գերմանական վաճառաց կ'ապահովէ կարևոր առաւելութիւններ։ Այս գաշնագիր պիտի գործադրի յետոյալ, յԱսիա և յԱփրիկէ վեհ. Սուլթանին ունեցած բոլոր երկրաց մէջ, և կնքուած է երկար ժամանակամիջոցի մը, այն է 21 տարուան համար։

Գերմանիա միւս կողմէ կը պատրաստուի կարելի եղածին չափ լուազոյնս օգուտ քաղել այս պայմաններէն։ Համապուրկի նաւարարք, նաւարկութեան նոր զիծ մը պիտի հաստատեն, որ փոխադրութեան ածան դընով մը հիւսիսային ծովու նաւահանգիստները կանոնաւոր հազորակցութեանց մէջ պիտի դնէ Կ. Պօլսոյ, Տէտէ-Աղաճի և Սէլանիկի, այսինքն եւրոպական Թուրքիոյ ծովային ներածութեան երեք մեծ կեդրոններուն հետ։

— Մէքլենբուրկի Դուքսն ու Դքսուհին երէկ պիտի մեկնէին մայրաքաղաքէս։ Ի պա-

տիւ իրենց չքեղ հացկերոյթ մը տրուեցաւ կայս. պալատան մէջ, Հացկերութի պահուն վեհ. Սուլթանը Օսմանիյէի ականակուռ պատուանշանը նուիրեց Դուքսին, և առաջին կարգի Շէֆազաթ պատուանշան՝ Դքսուհոյն, ինչպէս նաև այլ և այլ կարգի պատուանշաններ Դուքսին հետեւորդաց։

— Ռուսիոյ կայսեր հօրեղբորորդի Աղեքսանդր Միխայլէւիչ մեծ-դուքսն և Սերկիոս մեծ-դուքսն հինգչարթի օր Թամարա շոգե-նաւով Սեւաստաբոլէն մայրաքաղաք՝ Ժամանեցին և արժանավայել պատիւներով ընդունուելով ուղղակի ռուսական գեսպանատունը գնացին։

— Ելմտական նախարարութեան մէջ յանձնաժողով մը կազմուած է՝ քննելու համար գաւառներու մէջ գանձուած կալուածատուրոց և թէմէթիւր տրոց գանձման եղանակն և այդ առթիւ ինչ ինչ բարենորոգումներ որոշելու համար։ Յանձնաժողովը կը կազմեն տրոց տնօրէն Հըֆզի պէյ, Այսուրնի նահանգին նախորդ տէֆթէրտար Գատրի պէյ, և ելմտական քննիչ Եագուպ էֆէնտի։

— Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը խմբագրելու վրայ է Ոսկեղջիւրի քարափանց շինութեան մենաշնորհի պայմանագիրն ու յանձնառութեանց տետրը։ Մենաշնորհը խնդրող Պ. Կուանէ տրամադիր կ'երեւի կայս. կառավարութեան առաջարկութեանց համակերպելու։ Պ. Կուանիէ հասու-թից հարկւրին հինգը միայն կառավարութեան թողուլ առաջարկած, և սակայն Ձինուորական Բնիչ Յանձնաժողովը այդ հարկւրին հինգը տասնի վերածած լինելով, Պ. Կուանէ ընդունած է այս բարեփոխումն. նոյնպէս համաձայնած է ինչ ինչ կ'տեւրու վրայ որոց մասին իր գիշումներ մեծապէս դիւրացուցած են գործոյն լուծումը։

Քարափանց շինութեան ծախք հաշուուած է 60 միլիոն Փրանք, որոյ վեց մասանց հինգը պիտի յատկացուին նախնական ծախսոց, նիւթեղինաց գնման, ինչպէս նաև այն կալուածոց գնման որք անհրաժեշտ են քարափանց շինութեան համար։

— Թաւիգ կ'իմանայ թէ, Օսմ. կայս. Պանքայէն 3000 օսմ. ոսկոյ փոխառութիւն մը եղած է կայս. Թանգարանի պակասները լրացնելու համար, թէ Թանգարանի կից կառուցեալ նոր շէնքն աւարտած ըլլալով բացումն ի մօտոյ տեղի պիտի ունենայ, թէ գաւառաց հետ բանակցութիւնք կը կատարուին պատմական կարեւորութիւն ունեցող հնութիւններ բերել տալու համար և թէ գեղարուեստից վարժարանին նկատմամբ ինչ ինչ բարենորոգումներ ի գործ դրուելով, դաստանդութիւնք առաւել եւս կանոնաւորութեամբ պիտի կատարուին։

— Տէրութեան ելմտական գործոց բարելոման համար ելմտից նախարար Գազադեան Վսեմ. Յակոբ փաշայի առաջարկած բարենորոգումները յառաջիկայ մարտի սկիզբէն գործադրութեան պիտի դրուին։

— Կայս. պալատան բժշկապետ Վսեմ. Մավրօեանի փաշա երէկ Մաքրիզիւզ երթալով, տեսակցեցաւ Յունաց Ամեն. Դիոնիսիոս Պատրիարքին հետ։

— Սամսոնէն ի Սեբաստիա շինուելիք երկաթուղոյն համար Պ. Գոթարի ներկայացուցած ծրագրոյն վրայ բանակցութիւնք աւարտելու վրայ են։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքարանաց առանձնաշնորհմանց խնդրոյն համար հինգչարթի օր Բ. Դրան մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարեցաւ ընդ նախագահութեամբ Բարձր. Մեծ-Եպարքոսին և անդամակցութեամբ Ներքին, Արտաքին ու Դատական Վսեմ. նախարարաց։

Յանձնաժողովն մինչև գիշերուան ժամ մէկ խորհրդակցութիւններ կատարեց։

Սոյն գումարման ներկայ էր նաև կրօնական գործոց տեսուչ Ձիվէր պէյ։

— Հոկտ. 17 թուականաւ Փեթրսպուրկէն մայրաքաղաքս եկած հեռագրէ մը կ'իմանամք թէ Ռուսիոյ Հայք որք անցեալ կիւրակէ օր Ս. Միւռոնի օրհնութեան առթիւ յէջմիածին համախմբեալ էին, անձնուիրութեան հեռագիր մ'ուղղած են առ Ձարն։

— Թիֆլիսի Նոր-Դար լրագրոյն մէջ կը կարդամք թէ Գեր. Խորէն եպիս. Նար-Պէյ սեպտ. 15ին Պորժոմամառանոցէն Թիֆլիս վերադարձեր է և ի մօտոյ պիտի մեկնի անտի մայրաքաղաքս գալու համար։

— Կ'իմանամք թէ, ըստ առաջարկութեան Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ Թաղ. խորհրդոյն, Եգիպտոսի առաջնորդ Գեր. Տ. Մատթէոս եպիս. Իզմիրեան նոյն եկեղեցւոյ քարոզչութեան պաշտօնը պիտի վարէ՝ ցորչափ մնայ մայրաքաղաքս։

— Ուսումն. Խորհուրդը իւր երէկի նստին մէջ որոշեց չըջարեալականաւ մը ծանուցանել Ազգ. վարժարանաց Տեսչութեանց որ ի գաւառս և աստ թէ, այն չըջանաւարտք որք Ուսումն. խորհրդոյ կողմանէ չունին վկայական ուսուցչութեան՝ դադրին պաշտօնավարել և փութան իրենց վկայականներն ստանալ։ Յայտնի է թէ, մանաւանդ ի գաւառս, տեղական կառավարութիւնք հոգ կը տանին որ ուսուցիչք վկայեալ լինին իրենց հոգեւոր վարչութեան։

Ուսումն. Խորհուրդը նկատողութեան առնելով նոյնպէս որ Օսմաներէն լեզուի գեղադրութիւնը ցարդ հարկ եղած կարևորութիւնն ստացած է՝ ազգային վարժարանաց մէջ, որոշեց յատուկ հրահանգաւ յանձնարարել վարժարանաց Տեսչութեանց որ այդ մասին լիովին հոգ տարուի։

Խորհուրդը նկատելով որ իւր անդամներէն ոմանք ժամանակէ մը ի վեր հրաժարած են, իրեց անգամ անուանեց Յակոբ Գուրգէն, Համարձուս Ալաճաճեան և Բիւզանդ Քէչեան էֆէնտիները։

Հեղինակէն ստացանք Խանճեան Սահակ էֆէնտիի ի պէտս ազգ. նախակրթական վարժարանաց յօրինած Ուսումն. Բիւսնէական Հաւասոյ դասագրքին Բ. տպագրութիւնն, բաղկացեալ 256 էջերէ։ Տպագր. Ն. Կ. Պէրպէրեան, Կ. Պոլիս, 1890։ Գին 60 փարա։ Կեդրոնատեղին է Պէրպէրեան տպարանը։

Ա. Բ. Ե. Ք. Դ. Բ. Ա. Մ. Ո. Ց			
Օսմ. լիւրս 400 զըշ. էն			
Մեծիտիյէ	108	Բուսիոյ բօլ	91 23
Մեթալիք	100	Նաբոլէան	87 13
Պէշլիք	102 20	Գրեմից	54 40
Ալթըլըք	102 30	Անգղ. լիւրս	110 5
Մանէթ թղթագրամ 7 44			
Գոնուլիտէ (երեկոյ.)	19 22	Բուս. երկ բաժին	78 1/2
Նոր փոխ. 4 0/0		Թղթագրամ (Թաս.)	42 20
(Թահիլիթը 0-ամ.)	80	Ներքին փոխառ.	60

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի զապիլէ հաստէսի, բիւ. 61